

- 10. Թղ. 30բ. Յաղագս վերջին օժմանն: — 30բ. Յաղագս խորհրդայ վերջին օժման: «Չվերջին օժման խորհուրդն...»: — 31բ. Կարգ պաշտելոյ զխորհուրդն վերջին օժման: «Արդ քահանայն, որ պաշտելոց է զխորհուրդս զայս, հոգասցի որքան հնար է...»:
- 11. Թղ. 33բ—46ա. Յաղագս այցարարութեան եւ հոգոյ հիւանդաց: — Օրհնութիւն հիւանդացեալ մանկանց: — Եղանակ օղնելոյ մեռանողաց: — Կարգ յանձնարարութեան հոգւոյն:
- 12. Թղ. 46բ. Յաղագս թաղման: — Կարգ թաղման: — 53բ. Օրհնութիւն գերեզմանին եւ այլն:
- 13. Թղ. 62ա—70ա. Յաղագս խորհրդայ ամուսնութեան: — Յաղագս խորհրդայ Ամուսնութեան: Բարօխն, յորժամ իմանայ...: — Կարգ հռչակելոյ զխորհուրդն Ամուսնութեան: — Օրհնութիւն մատանեաց: — Կարգ օրհնելոյ զամուսնութիւն: — Օրհնութիւն ամուսնութեան: — Օրհնութիւն Աւագաստի: — Օրհնութիւն փեսային զկնի Հարսանեացն: — Օրհնութիւն հարսին զկնի Հարսանեացն: — Օրհնութիւն կնոջն զկնի որդեծնութեան նորա:
- 14. Թղ. 70բ. Յաղագս օրհնութեանց հասարակ խրատք:
- 15. Թղ. 71ա. Կարգ օրհնելոյ զՂուր:
- 16. Թղ. 73ա. Ի տօնի Յայտնութեան Տեառն օրհնութիւն ոսկւոյ, խնկոյ, եւ զրմոսոյ:
- 17. Թղ. 73ա. Ի տօնի Տեառնընդառաջին. օրհնութիւն մոմեղինաց:
- 18. Թղ. 74ա. Օրհնութիւն մոմեղինաց արտաքոյ աւուր Տեառնընդառաջին...:
- 19. Թղ. 74ա. Ի Չորեքշաբթի մոսորոց:
- 20. Թղ. 75ա. Ի կիրակէ Ծաղկազարդին օրհնութիւն ոստաց:
- 21. Թղ. 76ա. Ի նմին աւուր Ծաղկազարդին. Արարողութիւն գոնրացին:
- 22. Թղ. 77ա. Ի մեծի Հինգշաբթի. Կարգ արձակելոյ զապաշխարոյս:
- 23. Թղ. 81ա. Կարգ Ոսնյուային:
- 24. Թղ. 84բ. Ի Չատկին Յարութեան Տեառն: Բացումն Գերեզմանին Տեառն:
- 25. Թղ. 85ա. Ի Չատկին. օրհնութիւն Տանց:
- 26. Թղ. 85բ. Ի Տօնի վերափոխման սրբուհոյ Աստուածածնին. օրհնութիւն խոսոց եւ պողոց:
- 27. Թղ. 86բ. Օրհնութիւն նոր տան:
- 28. Թղ. 87ա. Օրհնութիւն տանց յորում եւ պիտոյ իցէ ժամանակի:
- 29. Թղ. 87բ. Օրհնութիւն Տեղոյ:
- 30. Թղ. 87բ. Օրհնութիւն Ուտելաց:
- 31. Թղ. 88ա. Օրհնութիւն Հացի վասն հիւանդաց:
- 32. Թղ. 88բ. Օրհնութիւն Կաթնեղինաց:
- 33. Թղ. 88բ. Օրհնութիւն Պարզ ձիթոյ վասն հիւանդաց եւ այլ պիտոցից:

- 34. Թղ. 89ա. Օրհնութիւն նոր Պաղոց:
- 35. Թղ. 89ա. Օրհնութիւն հասարակ ի վրայ Արմտեաց եւ Այգեաց:
- 36. Թղ. 89ա. Օրհնութիւն Ընդոց այսինքն՝ Սերմանց:
- 37. Թղ. 89բ. Յատուկ օրհնութիւն Ուլաին:
- 38. Թղ. 89բ. Օրհնութիւն հասարակ իրաց, որպէս Ալեր, Ուլաի, եւ այլոց:
- 39. Թղ. 89բ. Օրհնութիւն Սոսոց որպէս Փեքենայի, Վարդից եւ այլոց:
- 40. Թղ. 90ա. Օրհնութիւն սրոյ եւ իցէ խնկոյ կամ ծխանելեաց:
- 41. Թղ. 90ա. Օրհնութիւն Ամանոց:
- 42. Թղ. 90ա. Օրհնութիւն նոր նաւի:
- 43. Թղ. 90բ. Օրհնութիւն Ուռկանի:
- 44. Թղ. 90բ. Օրհնութիւն ջրոց եւ գետոց եւ ջրհորաց:
- 45. Թղ. 90բ. Օրհնութիւն Վարդարանաց կամ Պսակաց:
- 46. Թղ. 91ա. Օրհնութիւն Պրօշի:
- 47. Թղ. 91ա. Ճանապարհորդարան: — Օրհնութիւն ճանապարհորդաց, եւս առաւել Ուխտաւորաց, որք առ սուրբ տեղիս երթան:
- 48. Թղ. 92ա. Օրհնութիւն ուխտաւորաց զկնի դարձմանն:
- 49. Թղ. 92բ. Յաղագս Թափօրից:
- 50. Թղ. 93բ. Յաղագս Թափօրին ի Տօնի Ամենասուրբ Մարմնոյն Բրիտոսի:
- 51. Թղ. 94ա. Յաղագս Թափօրից որք արտաքոյ տօնի Մարմնոյ Տեառն սրբութեամբ լինին:
- 52. Թղ. 94բ. Յաղագս Թափօրի ի տեղափոխութեան նշանաւոր նշխարաց սրբոց:
- 53. Թղ. 95ա. Մաղթանք ի մերժել զմրրիկ:
- 54. Թղ. 95բ. Մաղթանք ի խնդրել զանձրեւ:
- 55. Թղ. 96ա. Մաղթանք ի խնդրել զպարզութիւն օղոյ:
- 56. Թղ. 96բ. Մաղթանք ասելիք ի ժամանակի սղութեան հացի եւ սոժու:
- 57. Թղ. 96բ. Մաղթանք ի ժամանակի մահացութեան եւ ժանտամահու:
- 58. Թղ. 97ա. Մաղթանք ի ժամանակի պատերազմի:
- 59. Թղ. 98բ. Մաղթանք յորում եւ իցէ նեղութեան:
- 60. Թղ. 99ա. Մաղթանք վասն գոհանալոյ զԱստուծոյ յաղագս ընկալեալ բարութեան նորին:
- 61. Թղ. 99բ. Աղօթք ընդդէմ թռչնոց:
- 62. Թղ. 100ա. Օրհնութիւն ի ժանտամահու Անասնոց:
- 63. Թղ. 100բ. Կախարդութեանց եւ թողչութեանց մերժումն:
- 64. Թղ. 101բ. Օրհնութիւնք զորս եպիսկոպոսունք կամ քահանայք, որ զիշխանութիւն ի նոցանէ ունին, առնեն: — Օրհնութիւն քահանայական զգեստոց առ հասարակ:

- 65. Թղ. 102ա. Օրհնութիւն Պատառաց կամ թէ կառուց որովք սուրբ սեղանն ծածկի:
- 66. Թղ. 102ա. Օրհնութիւն գործորաւաց:
- 67. Թղ. 102բ. Օրհնութիւն Հաղորդատիւց եւ բազմոցին, վասն պահելոյ ի նմին զսուրբ Հաղորդութիւնն:
- Օրհնութիւն նոր խաչի:
- Օրհնութիւն Պատկերաց Տեառն մերոյ Յիսուսի Բրիտոսի, Երանուհոյ Կուսին Մարիամոյ, եւ այլ Սրբոց:
- 68. Թղ. 103ա. Օրհնութիւն նոր Զանկակի, մինչեւ եպիսկոպոսն սրբազործեսցէ զնա:
- 69. Թղ. 103բ. Կարգ օրհնելոյ եւ զնելոյ զնախկին վէմն վասն շինման եկեղեցւոյն:
- 70. Թղ. 105ա. Կարգ օրհնելոյ զնոր Եկեղեցի, կամ գհրապարական Աղօթանոց, զի ի նմա ամենասուրբ Պատարագն կատարել կարասցէ:
- 71. Թղ. 106բ. Կարգ հաշտեցուցանելոյ զպղծեալ Եկեղեցին:
- 72. Թղ. 107բ. Կարգ օրհնելոյ զնոր գերեզմանատուն:
- 73. Թղ. 108ա. Կարգ հաշտեցուցանելոյ զպղծեալ զգերեզմանատունն, թէ կցեալ իցէ եկեղեցւոյն, թէ զատուցեալ, ուր եկեղեցին ոչ է պղծեալ:
- 74. Թղ. 109ա. Յաղագս Երզնեցուցանելոյ զդիւահարս:
- 75. Թղ. 114բ. Կարգ այցարարութեան Եկեղեցեաց, բարօխէից եւ ժողովրդեան:
- 76. Թղ. 116բ. Եօթն Սաղմոսք ապաշխարութեան ընդ Լիթանիայից ամենայն սրբոց: Չորս վասն հիւանդաց, մինչ վերջին օժումն առնուն, կամ վասն այլ հարկաւորութեան ասին ծնրադրեալք:
- 77. Թղ. 120բ. Կերպք գրելոյ ի գրեանս, զորս Բարօխն ունիլ պարտական են: — Բարօխն ունիցի զչորս գրեանս...:
- 78. Թղ. 121բ. Կերպ գրելոյ զկացութիւն հոգւոց յերրորդ գրքին: — Իւրաքանչիւր տոհմ որոշապէս ի գիրքն գրեսցի...:
- 79. Թղ. 122ա. Կերպ գրելոյ զմեռեալս ի Դ. գիրքն:
- 80. Թղ. 122բ. Յանկ նշանաւոր իրաց Մաշտոցիս այսորիկ (այբուբենական):
- 81. Թղ. 123ա. Մեկնութիւն ոմանց բառից կանոնական իրաւանց որք ի Մաշտոցս յայտնի գտանին:
- 82. Թղ. 123բ. Կարգ օրհնելոյ զհարսն եւ զփեսայն նախ քան զօրհնութիւն ամուսնութեան: — Ուր է սովորութիւնս այս Հարսն եւ փեսայն աւուրբ միով յառաջ...: պարտին խոստովանիլ... Աղ. Փառք Քեղ թագաւոր յաւիտենից...:
- 83. Թղ. 124ա (այլ գրով). Երգ առ Հոգին սուրբ. Եկ սրբարար ստեղծող հոգի,

- զմիտս այս առնել քոյոց արի... լից վերնահան զեղմամբ շնորհի. զոր դու ստեղծեր, զսիրտ մաքրելի...:
- 84. Թղ. 124բ. Լիթանիայք առ սուրբն Գրիգոր Լուսաւորիչն Հայաստանեայց:
- 85. Թղ. 125բ. Կարգ ի զգեստոցանել զՏղայս զգեստիւ Սուրբ Գայեթանոսի ի յուխտէ: Թղ. 126բ դատարկ:
- 86. Թղ. 127ա/բ. Դաւանութիւն ուղղափառ հաւատոյ ըստ Պուլլային Բիտոսի Դ.ին, եւ պատուիրի Դրիտանդինոյ: Ասով կ'աւարտի:

(Շարունակելի:)

**ԿԱՐԸՊԵՏ ԱՐԹԻՆ ՓԵՇԸ ՏԵՆՈՒՏԵՆԸ  
ԿՈՒՍԵԿԵԼ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՌԱՎՈՐԻՉ  
ԼԻԹԱՆԵՆԻ  
(1816—1873)**

ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ

Հոյ Աղլի պատմութեան մէջ եղած են զէմքեր, որոնք հակառակ իրենց կարկառուն, արդիւնագործ ու պատուաբեր զործունէութեան՝ մնացած են ժամանակակիցներուն քիչ ծանօթ, իսկ յաջորդ սերունդներէն մոռցուած: Այդպիսի կարկառուն զէմք մըն է վսեմապատիւ Կարապետ Արթին Փաշա Տաւուտեան:

Թերթեցէք իր ժամանակակիցներու մասին գրուած մէկէ աւելի հայ կենսագրականներ, որոնք լեցուն են շատ մը աննշանակ անձինքներու մասին նոյն իսկ մանրամասն կենսագրութիւններով, բայց ի զուր պիտի փնտռէք հոն գոնէ համառօտ յիշատակութիւն մը Տաւուտ Փաշայի պէս կարեւոր անձնաւորութեան մը մասին: Շեշտելու համար Կարապետ Արթին Փաշայի մեծարժէք անձնաւորութիւն մ'ըլլալը՝ կը բաւէ եթէ հոս անմիջապէս յիշեմ թէ ան մեծ Larousseի<sup>1</sup> եւ La Grande Encyclopédie inventaire raisonné des sciences, des lettres et des arts<sup>2</sup> ի մէջ պատուոյ տեղ զբաւած է:

Հետեւարար ուշ մնացած ազգային պարտականութիւն մըն է որ պիտի կատարենք խօսելով այստեղ Տաւուտ Փաշայի կեանքին, հանրային գործունէութեան եւ գրական արդիւնքի մասին:

<sup>1</sup> Tome VI, p. 100.  
<sup>2</sup> Tome XIII, p. 919.

Ա.

ԿԵՆՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԳԾԵՐ

Վսեմ. Կարապետ Արթին Տառուտ փաշայի նախնեաց մասին կը պահպին մեզ տեղեկութիւններ: ԺԹ. դարու առաջին քառորդին — երբ կը ծնանի նա Կ. Պ. — նոյն քաղքին մէջ կը յիշուի Տառուտեան զերգաստան մը, որուն ներկայացուցիչներն են Տառուտեան Անտոն եւ Յովսէփ<sup>3</sup>: Ասոնք հայ կաթողիկէ համայնքի ակնաւոր դէմքերէն էին, բնիկ գաղատացիներ<sup>4</sup>, որոնք կը բնակէին Պոլսոյ Գանտիլի գիւղը<sup>5</sup>: 1827—1828ի կաթ. Հայոց ծանօթ ընդհանուր աքսորքի մէջ իրենք առաջիններէն կ'ըլլան<sup>6</sup>: 1842ին Յովսէփ Տառուտեան անգամ կ'ըլլայ եւրոպական Թուրքիոյ հարկահաւաքութեան ընկերութեան (Պէրպէրեան, անդ՝ էջ 276):

Արդ, Տառուտ փաշա այդ Տառուտեան զերգաստանի ծնողն է թէ ոչ՝ ստուգութիւն մը չունինք: Հաւանական կը մնայ միայն որ նա հայ պնտական զերգաստանէ մը կը սերէր, որուն նախնիքը Գաղատիայէն գաղթած եկած էին Կ. Պոլիս ԺԸ. դարուն<sup>7</sup>:

Տառուտ փաշա ծնած է Կ. Պոլիս 1816 Մարտին, հայ կաթ. ծնողքէ: Հին դերմանական օրէնագրութեան մասին 1845ին գրած իր հոշակաւոր գիրքը իր անունը կը կրէ՝ Կարապետ Արթին Տառուտ<sup>8</sup> օղլու: Որմէ կեղրակացիներ թէ իր անունն է՝ Կարապետ, հօր անունը Արթին (Յարութիւն) եւ մականունը՝ Տառուտ օղլու (Տառուտեան, Դաւթեան): Մականունի այս թրքական ձեւը անսովոր չէր հին առեն Հայերու քով, որոնք կը գրէին յաճախ. «Թօղ օղլու Կարապետ», «Փափագ օղլու Պետրոս<sup>9</sup>», «Պայկարաբ օղլու Անտոն», «Շէֆպէ օղլու Յովհաննէս», «Տէր-Դաւիթ օղլու Պետրոս<sup>10</sup>»,

<sup>3</sup> Տե՛ս Աւետիս Պէրպէրեան, Պատմութիւն Հայոց, Կ. Պ. 1871, էջ 82, 103, 190, 276: Յ. Ասկերեան (Հ. Պօղոս Վ. Պօյնուէրեան), Հասունեան քաղաքականութիւն, Տիֆլիս 1868, էջ 41, 124: Յ. Գ. Մ., Մասնակի պատմութիւն հայ մեծատուններու, Կ. Պ. 1910, էջ 126 եւն:  
<sup>4</sup> Պէրպէրեան, անդ՝ էջ 190:  
<sup>5</sup> Անդ՝ էջ 103: Ժամանակ, Կ. Պ. 1863, թ. 7:  
<sup>6</sup> Պէրպէրեան, անդ՝ էջ 106:  
<sup>7</sup> Հմմտ. Տարեցոյց Ս. Գրիգոր Լուսաւորիչ ազգ. երկես վարժարանի, Ա. տարի, Աթէնք 1931, էջ 42: Հանդէս Անսորիայ, 1898, էջ 74:  
<sup>8</sup> Այս միւսնոյն ձեւով կը յիշէ զինքը նաեւ Ասկերեան (անդ՝ էջ 237), այսինքն՝ «Կարապետ Արթին Տալուտ»:  
<sup>9</sup> Հայաստան, Կ. Պ. 1848, թ. 29:  
<sup>10</sup> Մէմուայը Հավատիս, Կ. Պ. 1861, թ. 402:

«Աւետիս օղլու Աւետիս<sup>11</sup>, «Գաթըրնը օղլու Կիւլլի Պօղոս<sup>12</sup>», «Բլնի օղլու Անտոն» եւ այլն (Հանդ. Ամս. 1911, էջ 88):

Տառուտ փաշա իր անունը ստորագրած է անգամ մը նաեւ սա ձեւով. Կարապետ Տալուտ Արթին<sup>13</sup>: Իսկ Պէրպէրեան իր Պատմութեան մէջ<sup>14</sup> Անտոն Կարապետ Տալուտեան կը կոչէ զինքը՝ գուցէ իր Պատմութեան սկիզբը<sup>15</sup> յիշած Անտոն Տալուտեանը ասոր իբր հայր կամ պապ ներկայացնելով: Տառուտ փաշա ուրիշ ոչ մէկ տեղ Անտոն կոչուած է:

Վսեմ. Կարապետ Արթին փաշա Տառուտեանի ընտանեկան շրջանակի մասին ոչինչ կ'աւանդեն մեզի ժամանակակիցները: Բայ ի յիշուած Անտոն եւ Յովսէփ Տառուտեաններէ՝ Տալուտ կամ Տալուտեան մականունով կը յիշուին նաեւ հետեւեալները. 1860ի Հայ Բարեգործական Ընկերութեան բաժանորդաց ցանկին մէջն են մէկական բաժին վճարումով.

- Տալուտ Կարապետ Էփ.
- „ Մկրտիչ
- „ Յակոբ Էփէնտի
- „ Յ. Կարապետ<sup>16</sup>
- „ Պօղոս
- Տալուտեան վարդաւն Յովհաննէս
- „ վարդաւն Տիգրան<sup>17</sup>:

Այս ցանկէն Յակոբ Տալուտ գործօն գեր ունեցած է նախ 1846ի «Համազգեաց Ընկերութեան<sup>18</sup>», յետոյ «Ազգային կրթութեան ժողովք»ին մէջ<sup>19</sup>: Կը կոչուի Տալուտ սօֆօր Յակոբի<sup>20</sup> կամ Տօֆօր Յակոբ Տալուտ, վկայուած Պիղպի համալսարանէն 1837ի ատենները<sup>21</sup>, որ Կ. Պոլսոյ բժշկական վարժարանի ուսուցիչ է եւ գրած արժէքաւոր

<sup>11</sup> Ասկերեան, անդ՝ էջ 111:  
<sup>12</sup> Մասիս, Կ. Պ. 1871, թ. 1182: Գաթըրնը օղլու՝ անունի գերաստանապետ Յակոբ Վարդուկեանի Հանդ. էջ:  
<sup>13</sup> Մէմուայը Հավատիս, 1861, թ. 387:  
<sup>14</sup> էջ 387:  
<sup>15</sup> էջ 82:  
<sup>16</sup> Կարապետ Արթին փաշա Տառուտեանն է աւելի:  
<sup>17</sup> Ե. Գ. Աղաբօն, Պոլսոյ 1860ի եւ Գահիրէի 1906ի Բարեգործականներուն ծնունդը եւ պատմութիւնը, Պրնէէն եւ Ժընէվ 1931, էջ 83:  
<sup>18</sup> Ասկերեան, անդ՝ էջ 96:  
<sup>19</sup> Անդ՝ էջ 389: Մէմուայը Հավատիս, 1861, թ. 387:  
<sup>20</sup> Ասկերեան, անդ՝ էջ 124:  
<sup>21</sup> Մէմուայը Հ., 1862, թ. 465: Հանդէս Ամսորիայ, 1898, էջ 75:

գիրք մը<sup>22</sup> եւ որ Վսեմ. Կարապետ Արթին Տառուտեան Փաշայի կ'ընկերանայ դէպ ի Լիբանան եւ անոր փոխանորդը, անձնական ընկերակցին ու խորհրդակցանն է<sup>23</sup>: Ըստ մեզ այս ցանկին մէջ չորս քովէքով շարուած անձերը՝ Տալուտ Մկրտիչ, Յակոբ, Յ. Կարապետ եւ Պօղոս եղբայրներ են: Վսեմ զի Յակոբ Տալուտ ընդհանրապէս իր անունն կից ունի Յ. (Յարութիւն) մը<sup>24</sup>, ինչպէս այդ ցանկին մէջ եւ այլուր Յ. կամ Ա. (Արթին) ունի Կարապետ Տառուտեան Փաշա: Նոյնպէս այդ ցանկին Տալուտ Պօղոս իր անունն կից ունի Ա. (Արթին) մը<sup>25</sup>, ինչ որ հաւանորէն կը ցուցնէ թէ իրենց հայրն եղած է Արթին կամ Յարութիւն Տառուտեան:

Տալուտեան մականունը կը կրեն նաեւ Ղազարոս Տալուտեան<sup>26</sup> եւ Սեպուհ Տալուտեան<sup>27</sup>, վերջինս երկրորդ դասու աշակերտ Բանկայթի Միթարեան Վարժարանի, Կ. Պ. 1861:

Վսեմ. Կարապետ Արթին Տառուտեան իր ուսումն ու դաստիարակութիւնը կը ստանայ Կալաթա Փրանսական տան մը մէջ: Յետոյ կը մեկնի Բերլին, ուր փայլուն յաջողութեամբ կ'աւարտէ իր ուսումները: Վերադառնալով Պոլիս՝ նախ պաշտօնի կը կոչուի արտաքին գործոց նախարարութեան գրասենեակներու մէջ: 1840ի ատենները կը կարգուի Բերլինի թրքական դեսպանատան թարգման եւ քարտուղար: Բերլինի մէջ իր այս երկրորդ անգամ ընկերութիւնը առիթ կու տայ իրեն ուսումնասիրելու գերմանական կազմակերպութիւնը եւ կը գրէ հին գերմանական ազգերու օրէնագրութեան վրայ այնպիսի մասնագիտական գիրք մը, որ մեծ հոշակ կը հանէ գիտական աշխարհի մէջ: Կ'ընտրուի անգամ Բերլինի գիտութեանց Ակադեմիայի: Աւելի վերջ կ'ըլլայ ընդհանուր հիւպատոս վիեննայի մէջ: Կանչուելով Կ. Պոլիս՝ կը մտնէ ներքին գործոց նախարարութեան տեսչութեան մէջ եւ 1859ին կ'ըլլայ պետ գրաքննական պաշտօնարանի: Ատկէ վերջ կ'անցնի Ելեւմտական նախարարութեան մէջ ու կ'աշխատակցի Ֆուադ Փաշայի՝ վարչակազմի ներկայացուցչական պաշտօններ, յետոյ կ'անուանուի տնօրէն հեռագրական պաշտօնարանի, որ հիմնական բարեփոխութեան կարօտ էր:



ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԻՆ ՏԱՐՈՒՏ ՓԱՇԱ  
 Թուրք Հեռագրական Պաշտօնարանի Տնօրէն  
 1860ին

1860ին Փրանսական գիտութեան արչաւարումը մը Տիւրքիներու եւ Մարոնիտներու կողմէն վերջ տուած ըլլալով՝ միջազգային Յանձնախումբ մը պաշտօն ստանձնած էր Լիբանանի կառավարութեան կազմակերպութեամբ գրադելու: Միջազգային այդ Յանձնախումբը երկար խորհրդակցութենէ վերջ կ'որոշէ Լիբանանի վրայ քրիստոնեայ միակ ընդհանուր կուսակալ մը դնել: Արդ, Կարապետ Արթին Տառուտեան, որ ճանչցուած էր իբրեւ կարող ղեւանագէտ անձ մը եւ կը լրացնէր միջազգային յանձնախումբի պահանջած բոլոր պայմանները՝ կ'ընտրուի երեք տարուան համար կուսակալ Լեռնալիբանանի: Այս ընտրութենէն անմիջապէս յետոյ Օսմանեան Կայսերական Պետութիւնը

<sup>22</sup> Հանդէս Ամսորիայ, անդ՝ էջ 75—76: Տօֆօր Վ. Յ. Թորգոմեան, Երեմիա Ձէլէպիի Քէօմիւրճեան Ստամբուլ պատմութիւն, Վիեննա 1913, էջ 296:  
<sup>23</sup> Մէմուայը Հ., 1861, թ. 416: Ասկերեան, անդ՝ էջ 477: Հ. Ա., անդ՝ էջ 76: Գր. Թորգոմեան (Հ. Ա. անդ՝ էջ 74 եւ 76) զինքը մերթ հօրեղբորդի եւ մերթ եղբորդի կը կոչէ Տառուտ Փաշայի: Գրկա. Յակոբ Տառուտ մեռած է 1878ին, Մեծ կղզի:  
<sup>24</sup> Ասկերեան, անդ՝ էջ 96, 201, 477: Մէմուայը Հավատիս, 1861, թ. 387 եւն:  
<sup>25</sup> Մէմուայը Հ., անդ՝ թ. 406 «Տալուտ Ա. Պօղոս»:  
<sup>26</sup> 1906 ընդարձակ Օրացոյց Ս. Փ. Հիւանդանոցի Հայոց, Կ. Պ., էջ 320:  
<sup>27</sup> Մէմու. Հավատիս, 1861, թ. 408:

զինքը կը բարձրացնէ միւշիրութեան (մարաշախտ) աստիճանին եւ կը կոչէ Տաւուտ Փաշա:

1861 Յուլիան պաշտօնի անցնելով՝ Վսեմ. Կարապետ Արթին Փաշա Տաւուտեան իր նոր ասպարէզին վրայ մեծ գործունէութիւն երեւան կը բերէ գաւառներու նոր պետեր ընտրելով, վարչական, դատաստանական եւ կրթական մարմիններու մէջ ներքին կազմակերպութիւն մտցնելով, ատուքերու գրութիւնը բարեփոխելով, ամէն կողմը ռազմազրտական ճամբաներ բանալով եւայլն: Երեք տարուան իր այս գործունէութիւնը ընդհանուր գոհունակութիւն առաջ կը բերէ թէ՛ իր հպատակ ժողովուրդներու եւ թէ՛ Թուրք Պետական Վարչութեան քով:

1864ին լրացած ըլլալով իր եռամեայ իշխանութեան շրջանը՝ Սուլթանի հրովարտակով հինգ տարի եւս կ'երկարաձգուի այդ իշխանութիւնը:

Ատկէ վերջ կրկնապատկած է Տաւուտ Փաշա իր ջանքերը Լեւոնալիրանանի սահմանները վերջնականապէս ճշգրտելու, 1860ին ընդունուած ծրագիրը իրագործելու եւ իր խնամքին յանձնուած ժողովուրդներուն բարօրութիւնը ապահովելու համար: Նա կը շահի ո՛չ միայն իր հպատակներուն, այլեւ զբացի երկիրներու ժողովուրդներուն համակրութիւնը, որոնք բուն փափագ կը յայտնեն իրենց երկրին՝ Լիրանանի կառավարչութեան կցումին: Իրաց այս վիճակը, բնականաբար, անհամաձայնութիւն առաջ պիտի բերէր իր եւ Սուրիոյ ընդհանուր կառավարչին միջեւ, որ չափազանց հակառակ էր արեւմտեան միջամտութեամբ զրուած վարչութեան մը: Ասոր հետեւութեամբ 1867 Գեկտեմբերին կը ներկայացնէ Տաւուտ Փաշա իր հրաժարականը Բարձրագոյն Դրան, բայց կը մերժուի ընդունիլ: 1868ին ընդունուած ըլլալով իր հրաժարականը՝ Ապրիլ 8ին կը վերադառնայ Տաւուտ Փաշա Կ. Պոլիս: Այս անգամ Թուրք Կայսերական Կառավարութիւնը իրեն կը յանձնէ հեռագրատանց, նամակատանց եւ հանրօգուտ շինութեանց նախարարութիւնը: Ռուսէլիի երկաթուղեաց շինութեան բազմաբարդ խնդրոյն յաջող եւ արդիւնաւոր լուծումն իր ջանքերուն պտուղն է, զոր գլուխ կը հանէ 1869ին յաճախակի ճամբորդութիւններով ու բանակցութիւններով Պարսի եւ Վիեննայի մէջ:

Իր բացառիկ կարողութիւններէն տակաւին շատ բան կարելի էր ակնկալել, սակայն զժրախտաբար 1870ին երեւան եկած հիւանդութիւն մը կը ստիպէ զինքը առժամանակեայ կերպով քաշուիլ գործէ՝ դարձանութիւն համար: 1871ին կը հարկադրուի բուրովին հրաժարիլ աշխատանքէ. նախ Բիոս կղզին, յետոյ Բիարրից (Ֆրանսա) կ'երթայ դարձանելու համար իր խանդարուած առողջութիւնը: Հոս 1873 Նոյեմբեր 4ին կը կնքէ իր արդիւնաշատ կեանքը մօտ 58 տարեկան հասակի մէջ եւ հաւանօրէն հոն ալ կը թաղուի: Իր ամուսնացած ըլլալու մասին ոչ մէկ տեղեկութիւն ունինք: Անձանօթ կը մնայ նաեւ իր գերդաստանի շառաւիղներու պատմութիւնը<sup>28</sup>:

Բ.

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ

Վսեմ. Կարապետ Արթին Տաւուտեան Փաշայի հանրային գործունէութիւնը ճոխ է բովանդակութեամբ եւ տարածուն՝ սլազանութեամբ: Ըլլալով ի բնէ ազնիւ յատկութիւններով օժտուած՝ ստացած էր ժամանակին եւրոպական շրջանակներու մէջ բարձր ուսում եւ լուսաւոյն կրթութիւն: Իր բազմակողմանի գիտութիւնն<sup>29</sup> ու ստացած դարձագումը շուտով ուշադրութիւնը կը դրաւն հանրութեան ու Թուրք Պետական Վարչութիւնը կանուխէն իրեն կը վստահ պատահանաւոր պաշտօններ: Հազիւ քսանամեայ՝ Տաւուտեան Թուրք արտաքին գործոց նախարարութեան գրասենեակներու մէջ պաշտօնեաց է: 1840ական թուականներուն Բերլինի թրքական դեսպանատան մէջ թարգմանի եւ քարտուղարի պաշտօն կը վարէ<sup>30</sup>: «Հայրենասէրի» համեմատ<sup>31</sup> Տաւուտեան 1843ին նոյն պաշտօնով Պարսի պիտի անցնէր, բայց կը թուի թէ այդ տեղի չէ ունեցած, այլ իր պաշտօնով մնացած է Բերլին, ուր 1845ին կը հրատարակէ իր գիտական աշխատանքը: 1846 Սեպտեմբերին, ըստ «Արշալոյս Արարատեան»<sup>32</sup>, կը կարգուի Բերլինի Օս-

<sup>28</sup> Տաւուտ կամ Տաւուտեան մականունով գերդաստանի տապանաբարբէքն միայն չորսը ծանօթ են մեզ, զոր յետոյ պիտի տեսնենք:  
<sup>29</sup> Բաց ի հայերէնէն ու թրքերէնէն՝ գիտէր ֆրանսերէն, գերմաներէն եւ անգլիերէն:  
<sup>30</sup> Հայրենասէր, Իգմիւր 1843, Թ. 3:  
<sup>31</sup> Անդ՝ Թ. 3:  
<sup>32</sup> Չմբնակ 1846, Թ. 242:

մանեան Դեսպանատան խորհրդոյ քարտուղար-թարգման: «Դաւթեան յարգի Կարապետ աղան», կը գրէ նոյն թերթը, «Պէրլինու (Բրուսիա) օսմանեան դեսպանատան խորհրդոյ քարտուղար եւ թարգման անուանեցաւ<sup>33</sup>»: Հոն կը մնայ մինչեւ 1847 Յուլիս մերթ վարելով նոյն իսկ դեսպանական գործերը: Այս մասին կը տեղեկագրէ հայ թերթ մը. «Տաւութեան արգոյ գիտնական Պ. Կարապետ որն որ երկայն ժամանակ Օսմանեան տէրութեան կողմանէ Պերլինի մէջ թարգմանի կամ գործակալի պաշտօն կատարելով՝ իրրեւ քաղաքագէտ անձ մեծ անուն ստացած էր...<sup>34</sup>»: Աւելի բնորոշ են «Արշալոյս Արարատեան» խօսքերը<sup>35</sup>. «Դաւթեան մեծապատիւ Կարապետ աղան, որ քանի մը ժամանակ ի վեր Բարձրագոյն Դրան դեսպանութեան պաշտօնը կը վարէր ի Պէրլին (Բրուսիա) անցած շարժ հասաւ ի Կոստանդնուպոլիս աւստրիական շոգենաւով»:

Յաջորդ. տարին, պաշտօնի բարձրացումով, Բարձ. Դուռը լիակատար իշխանութեամբ զինքը գործակալ (ընդհանուր հիւպատոս) կ'անուանէ Բերլինի: Վիեննայի Donau-Zeitung կը գրէ<sup>36</sup>. «Հանճարեղ ու բազմահմուտ Հայագի Պ. Տաւութեանը, որ... շատ տարի Պերլինի Օսմանեան Դեսպանատան մէջ քարտուղարութեան պաշտօնը կատարած է, հիմա Դրան կողմանէ լիակատար իշխանութեամբ գործակալ անուանուի է ու Պերլին կու գայ»:

1850—1852ի միջոցներուն վարած է Վիեննայի Թուրք դեսպանատան քարտուղարի պաշտօնը, եղած նաեւ ընդհանուր հիւպատոս: Առաջինի մասին կը գրէ Վիեննայի Presse թերթը. «... ամենուն ծանօթ գիտնական Տաւութեան Հայագիին, որն որ ատեն մը Վիեննայի դեսպանատան քարտուղար էր<sup>37</sup>»: Իսկ հիւպատոսութեան մասին կը վկայէ Larousse<sup>38</sup>, ըսելով. «il devint plus tard consul général à Vienne»:

Հիւպատոս եղած ըլլալու է 1856—1857 տարիներուն (Հմմտ. Մէճմ. Հ. 1856, Թ. 165. Մասեաց Աղաւնի, Պարսի 1857, էջ 119):

<sup>33</sup> Հմմտ. Հայաստան, Կ. Պ. 1846, Թ. 7:  
<sup>34</sup> Հայաստան, Կ. Պ. 1847, Թ. 10—63:  
<sup>35</sup> Անդ, 1847, Թ. 289:  
<sup>36</sup> Եւրոպա, Վիեննա 1848, Թ. 21, Մայիս 11:  
<sup>37</sup> Անդ՝ 1854, Թ. 33, Օգոստ. 9:  
<sup>38</sup> Tome VI, էջ 100. Հմմտ. La Grande Encyclopédie inventaire raisonné des sciences, des lettres et des arts, Tome XIII, էջ 919: Հակառակ մեր փնտառութիւններուն՝ տեղւոյ վրայ գայր ստուգել անկարելի եղաւ:

Կարեւոր վկայութիւն մը այս մասին Գարրիէլ Վ. Այվազովսքին կ'ընծայէ: 1857ին Պարսիէն Կ. Պոլիս ճամբորդութեան ընթացքին կը հանդիպի նա Վիեննա, ուր եօթ օր կը մնայ եւ կը տեսակցի Վիեննայի Հայոց հետ: Վերջիններու թիւը քսանէն աւելի է, կ'ըսէ, — առանց յիշելու Մխիթարեանները — եւ կը թուէ անոնց անունները, որոնց կարգին կը յիշէ նաեւ Կարապետ Արթին Տաւուտեան՝ իրրեւ Վիեննայի հիւպատոս Օսմանեան Պետութեան կողմէ, գրելով. «Տաւուտ Կարապետ աղա, հիւպատոս օսմանեան պետութեան» (Մասեանց Աղաւնի, անդ):

Կը թուի թէ 1857ի վերջերը կամ 1858ի սկիզբը Կ. Պոլիս վերադարձած է:

Յետոյ վերադառնալով Պոլիս՝ զինքը կը գտնենք ներքին գործոց նախարարութեան տեսչութեան մէջ: 1854ին անգամ է Դանուրեան Յանձնախումբին, ինչպէս կը տեսնուի նոյն տարւոյ Վիեննայի Presse թերթին հեռագրական մէկ լուրէն, զոր կը թարգմանէ «Ներսիս»<sup>39</sup>. «Օսմանեան կառավարութիւնը դեռ կը շարունակէ օտարագրի ճարտարներն իր ծառայութեան մէջ աւելելու, եւ զանոնք Դանուրի եղերքը կը խրկէ, որ երթան ու հոն Ագրիանուպոլիսի դաշինքէն ետքը քանդուած ամրոցները նորէն շինեն ու նորոգեն: Ուրիշ յանձնարարական ժողովք մ'ալ նոյն կողմերը գացած է, եւ աս ժողովքին անդամներն են, Տէրվիշ փաշա զինուորական զարոցին տեսչը, ամենուն ծանօթ գիտնական Տաւուտեան Հայագիին... եւ Լուտովի կոմսը՝ Կոստանդնուպոլսոյ աւստրիական դեսպանատան խորհրդականը»: Դանուրեան Յանձնախումբի անդամ կ'ընտրուի նաեւ 1856ին, որ կը տեւէ հաւանօրէն մինչեւ 1858 տարին (տե՛ս Մէճմ. Հ. 1856, Թ. 165. 1858, Թ. 238): Այս անթիւ կը ստանայ Աւստր. Պետութեանէն՝ Փրանկիսկոս Յովսէփի Կարգին Հրամանատարութեան աստիճանը, Բաւերիոյ կողմէ՝ Բաւեր. Թագի երրորդ աստիճանը, Վիւրտեմբերգի կողմէ՝ Վիւրտեմ. Թագի երրորդ աստիճան պատուանշանները (Մէճմ. Հ. 1858, Թ. 238. Մասեաց Աղաւնի, 1858, էջ 107):

1859ին Տաւուտեան պետն է գրաքննական պաշտօնարանին: Յետոյ կ'անցնի ելուստական Նախարարութեան մէջ, ուր կ'աշխատակցի Թուրք պետական անուանի նախարարին՝ Ֆուադ փաշայի եւ կը վարէ շատ

<sup>39</sup> 1854, Թ. 33:

կարեւոր երեւոյթական գործեր: Հեռադրական պաշտօնարանը բոլորովին անկազմակերպ վիճակ ունենալուն՝ Կարապետ Արթին Տաւուտեան 1860 Օգոստոսին կ'անուանուի տնօրէն նոյն պաշտօնարանին՝ կազմակերպելու համար զայն<sup>40</sup>:

Կարապետ Արթին Տաւուտեանի հանրային գործունէութեան մեծագոյն ասպարէզը սակայն, որ միանգամայն իր արդիւնաշատ գործունէութեան փառքը կը կազմէ՝ եղած է Լիբանանի կուսակալութիւնը:

Լեոնալիբանան (ձէպէլ Լիպան), որուն գլխաւոր բնակչութիւնը կը կազմէին Մարոնիտները (քրիստոնէայ) եւ Տիւրքիները (մահմետական), 1840էն<sup>41</sup> սկսած թատրեղած էր ներքին ազգամիջեան կռիւներու՝ իւրաքանչիւրն ունենալով իր յատուկ էմիրը կամ շէյխը իրրեւ կառավարիչ: Ծանօթ է 1845ի զարհուրելի քաղաքական կռիւը այդ երկու ցեղերուն միջեւ: Ներքին անհամաձայնութիւնները փոխադարձ ատելութեան փոխուելով՝ 1860ին յանգեցաւ ահուկի կոտորածի մը, որուն մանրամասնութիւնները տուած են ժամանակակից արեւելեան թէ աբեւտեան թերթերը<sup>42</sup>: Տասնեակ հազարաւոր<sup>43</sup> Մարոնիտներ եւ ուրիշ քրիստոնէաներ ջարդուեցան, բնակարաններն հրդեհուեցան, ինչքերը կողոպտուեցան, ճիթաստաններն ու թթաստանները — անոնց միակ սնունդի աղբիւրը — արմատախիլ եղան... (Տե՛ս այս մասին Le Baron J. de Testa, Recueil des traités de la Porte Ottomane avec les puissances étrangères, Tome 6, Paris 1884, էջ 71—84):

Այս քսամներէի ոճիրները մեծ յուզում պատճառեցին արեւմուտքի մէջ: Ֆրանսայի նախաձեռնութեամբ Պարիսի մէջ չորս մեծ պետութեանց եւ Բ. Դրան մասնակցութեամբ գումարուած դեսպանաժողով մը որոշեց 12․000նոց արշաւախումբ մը զրկել Սուրիա,

որուն 6000ը Ֆրանսա Օգոստոսին արդէն Բէյրութ ցամաք հանեց: Սուլթան Մէճիթ ջանաց շուտով զօհացում տալ ընդհանուր արգար պահանջին՝ իրրեւ Նախագահ Քննիչ Յանձնաժողովի<sup>44</sup> մը՝ լիազօր իշխանութեամբ Ֆուադ Փաշան Լիբանան զրկելով, որ անաշտ քննութեամբ շատ մը յանցաւորներ պատժեց եւ եղած չարիքը դարմանելու ջանաց<sup>45</sup>:

Լիբանանի մէջ վերջնական խաղաղութիւնը ապահովելու համար Մեծ Պետութիւնները՝ համաձայնութեամբ Բ. Դրան՝ որոշեցին որ՝

1. Լիբանանի վարչութիւնը դրուի օսմանեան հպատակ միակ քրիստոնէայ կառավարչի մը իշխանութեան տակ, որուն տրուի վէզիրութեան աստիճան եւ նստի Դէլի-էլ-Կամար՝ ուղղակի Բ. Դրանին կախում ունենալով:

2. Լիբանանի ոստիկանութեան եւ երկրի պահպանութեան համար տեղացիներէն զինուոր պիտի առնուի, որոնք միայն կառավարչին թոյլտուութեամբ կրնան մտնել Պետութեան գունդերը:

3. Կառավարիչը պիտի ընտրուի համաձայնութեամբ Բ. Դրան եւ Մեծ Պետութեանց դեսպաններու: Իր իշխանութիւնը երեք տարի պիտի տեւէ: Եթէ փոփոխել պէտք ըլլայ՝ միշտ Մեծ Պետութեանց խորհրդակցութեամբ պիտի ըլլայ:

4. Լեոնալիբանան երկու Սորհուրդ պիտի ունենայ՝ վարչական եւ Դատական, որոնց մէջ համեմատական թուով ամէն կրօնքէ անդամ պիտի գտնուի:

Լիբանանի կառավարիչը, որպէս զի իր դժուարին գործը զլուխ կարենայ հանել, կը պահանջուէր որ օժտուած ըլլայ գործա-

<sup>40</sup> Ֆուադ Փաշայի Քննիչ Յանձնաժողովին անգամ էին հետեւեալ Հայերը, որոնք մեծապէս օգտակար եղած են. Սահակ Ապրօ, տնօրէն արտաքին գործոց նախարարութեան Ֆրանսերէն թղթակցութեան, մին Բ. Դրան ամենահանձարեղ պաշտօնեաներէն. Ֆրանսիո նապի (սուրիահայ կաթողիկէ), տնօրէն Բ. Դրան զատակիճական գրասենեակին, որ իր անձնական արժանիքով հասած էր այս բարձր պաշտօնին. Տաւուտ Փաշայէն յետոյ կ'ըլլայ կուսակալ Լիբանանի. Ստեփան Արգուսեան, Բ. Դրան քարտուղար-թարգման, յետոյ արտաքին գործոց պաշտօնատան ղեկնապետ Դիլա. Ռուսիներէն: (Richard Edwards, La Syrie, Paris 1862, էջ 206: Մասիս, 1860, թ. 443, 446. Նոյն՝ 1862, թ. 562: Մէճիթուայը Հավատիս, 1860, թ. 357: Հանդէս Ամսօրեայ, 1902, էջ 250):

<sup>45</sup> Տե՛ս Richard Edwards, La Syrie, անդ՝ էջ 215—226: Oscar Jäger, Versuch einer Darstellung neuester Geschichte, անդ՝ էջ 411: Հ. Մ. Վ. Նուրիխան, անդ՝ էջ 567—568: Մասիս, 1860, թ. 446 էւն:

<sup>40</sup> Մասիս, Կ. Պ. 1860, թ. 445: Atheneum անդրիերէն թերթը կը գրէ որ Թուրքիոյ հեռագրատան կարգաւորման մէջ մեծ արդիւնք ունի Տաւուտ Փաշա (Մէճիթուայը Հավատիս, 1868, թ. 748):

<sup>41</sup> Տե՛ս Արշալոյս Արարատեան, Չմիւտիւհա 1840, թ. 1, 7. 1841, թ. 56, 58, 63 էւն: Հ. Մ. Վ. Նուրիխան, Պատմութիւն ժամանակակից, Վենետիկ 1896, Բ. Հատ., էջ 300—307:

<sup>42</sup> Տե՛ս Մասիս, անդ՝ 439, 440, 441, 446. Մէճիթուայը Հավատիս, 1860, թ. 349, 354, 355, 356, 360:

<sup>43</sup> R. P. de Damas (Denkschrift über die Lage des Christentums im Orient, Wien 1862, էջ 8), 20․000 կը գնէ գոհերու թիւը, իսկ Oscar Jäger (Versuch einer Darstellung neuester Geschichte, Leipzig, 2. Band, 1875, էջ 411), 30․000 կը համարի:

դիր լիազօր իշխանութեան մը բոլոր իրաւասութիւններով: Իր գլխաւոր պարտականութիւնը պիտի ըլլար հսկել Լեոնալիբանանի ամբողջ տարածութեան վրայ կարգի եւ հանրային ապահովութեան վրայ: Մինչեւ որ տեղական զինուորութիւնը կազմուէր՝ պետական զինուորները պիտի մնային եւ Լիբանանի ոստիկանութիւնը վարէին<sup>46</sup>:

Արդ, ա՛յսքան ծանրակշիռ, պատասխանատու, բայց եւ ա՛յնքան պատուարեր վարչութիւն մը կը վստահուէր հայազգի Կարապետ Արթին Տաւուտեանի: Հինգ Մեծ Պետութեանց եւ Թուրք Կայսերական Պետութեան կողմէ իր ընտրութիւնը Լիբանանի կառավարչութեան՝ գրեթէ միաձայնութեամբ եղաւ:

Մեծ Պետութիւնները իրարու հետ համաձայնելէ յետոյ թէ Լիբանանի ընդհանուր կառավարիչը պէտք չէ որ Լիբանանցի բնիկ մը ըլլայ (տե՛ս Recueil des traités de la Porte Ottomane, անդ՝ էջ 368—388), Կարապետ Արթին Տաւուտեանի անձին վրայ կը կենդրոնանան իրրեւ միակ լաւագոյն եւ յարմարագոյն անձը Լիբանանի կառավարչութեան:

1861 Մայիս 28 թուականով Պոլսոյ Փրանսական դեսպան Marquis de La Valette կը հեռագրէ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Thouvenel-ի. «... Լեոնալիբանանի կառավարչութեան համար օտար հետամուտներու մէջէն լաւագոյնը պիտի ըլլար հայ կաթողիկէ Տաւուտ Էփէմսին, որուն յարաբերութիւնները Ֆրանսայի դեսպանին հետ սքանչելի են» (Recueil des traités, անդ՝ էջ 387. հմմտ. անդ՝ էջ 389):

1861 Յունիս 18ին Պոլսոյ անգղիական դեսպան H. Bulwer կը հեռագրէ Անգղիոյ արտաքին գործոց նախարար Lord J. Russell-ի. «Միւր՛րդ, պատիւ ունիմ Ձեր Վսեմութեան գեկուցանելու որ Սուլթանը վերջնականապէս հաստատած է Տաւուտ Էփէմսի անուանումը իրրեւ Լիբանանի կառավարիչ, Միւրիի աստիճանով եւ տիտղոսով: Իրեն պաշտօնի տուելութիւնը տեղի պիտի ունենայ Բ. Դրանը առաջիկայ Ծարաթ օր, ամսոյ 22ին:

<sup>46</sup> Տե՛ս այս մասին Հ. Մ. Վ. Նուրիխան, Պատմ. ժամանակակից, անդ՝ էջ 569—570: Լիբանանի վարչութեան ամբողջ կանոնադրութիւնը՝ La Syrie, անդ՝ էջ 576—580: Հմմտ. նաեւ Միւտիսի էրճիյաս, Կ. Պ. 1861, թ. 77. Արշալոյս Արարատեան, 1861, թ. 650: Le Baron J. De Testa, Recueil des traités de la Porte Ottomane avec les puissances étrangères, Tome VI, Paris 1884, էջ 338—343.

Տաւուտ Էփէմսի ծնունդով հայ, հաւատքով կաթողիկէ՝ արդէն Թուրք դիւանագիտութեան ծառայութեան մէջ էր եւ ժամանակ մը Դանուբի նաւարկութեան եւրոպական յանձնախումբի մէջ Թրքական անդամի պաշտօններ կատարած է: Վերջին անգամ անուանուած էր հեռագրատան ընդհանուր տնօրէն: Ան այս գործերու մէջ անսովոր կարողութիւն ցուցուցած է, եւ այս երկրին յառաջդիմութեան համար իրեն առջեւ ծառայած ամէն կարգի դժուարութիւններու դէմ մեծ վճռականութեամբ եւ յաջողութեամբ յարատեւարար զլուխ ցցած է: Ի վերջոյ թերեւս դժուարին պիտի ըլլար ընդունուած հետամուտներու միջեւ լաւագոյն ընտրութիւն մը ընել, եւ միմիակ առարկութիւնը, որ Տաւուտ Էփէմսիի դէմ լսած եմ՝ սա է որ արարեբէն չի գիտեր» (Recueil des traités, անդ՝ էջ 403):

Թուրք Կայսերական Պետութիւնը 1861 Յունիս 22ին (նոր տոմար)<sup>47</sup> յատուկ Ֆերմանով մը հեռագրական պաշտօնարանի վերատեսուչ Կարապետ Արթին Տաւուտեանը կ'անուանէր Ընդհանուր կառավարիչ Լիբանանի՝ տալով անոր միւշիքութեան<sup>48</sup> աստիճան եւ կոչելով զինքը Տաւուտ փաշա<sup>49</sup>: Բարձրագոյն Դուռը՝ համաձայնութեամբ

<sup>47</sup> Արշալոյս Արարատեան, 1861, թ. 651:  
<sup>48</sup> Միւշիք արարեբէն բառը կը համապատասխանէ գաղղ. maréchal եւ գերմ. Feldmarschall: Օսմանեան Կայսրութեան մէջ սովորաբար ութը միւշիք կար: Վսեմ. Կարապետ Արթին Փաշա Տաւուտեան առաջին քրիստոնէան, հետեւաբար նաեւ առաջին Հայն է, որ Թուրք Կայսերական Պետութեան մէջ կը ստանայ այս բարձր աստիճանը: Atheneum անունով անգղիերէն թերթը կը գրէ որ «Տաւուտ Փաշա բոլոր քրիստոնէաներու մէջէն առաջինը եղաւ որ միւշիքի աստիճանին բարձրացաւ. թէեւ իրմէ առաջ ուրիշ քրիստոնէայ փաշաներ պատիւներու հասած էին, սակայն այս աստիճանը չունէին» (Մէճիթ. Հավատիս, 1868, թ. 748): Հայերու մէջէն, իրմէ վերջ, այս բարձր տիտղոսին արժանացած են նաեւ հայազգի Ֆրանսո Փաշա, որ Տաւուտ Փաշայէն վերջ Լիբանանի կուսակալ կ'ըլլայ, հայազգի Ֆայիզ Փաշա (Կայսերական լանտի գլխաւոր ղեկագործը) եւ Նուպար Փաշա, երկրորդ արտաքին գործոց նախարարը (Դիւալի, Կ. Պ. 1873, թ. 65):

<sup>49</sup> Պէրպէրեան (անդ՝ էջ 387) կը գրէ. «առաջին փաշա կամ կուսակալ ընտրեցաւ Անտօն Կարապետ Տաւուտեան ի Հոովմէճազաւան Հայոց, եւ զրեցաւ ի հրովարտակին Տափուս փաշա, եւ առաքեցաւ պատուով ի պաշտօն իւր»: — Patrie թերթը կը գրէ որ Լիբանանի կառավարիչ ընտրուելու օրը Վսեմ. Կարապետ Արթին Տաւուտ Փաշա Ս. Քահանայապետին ուղղած գրութեան մը մէջ իր ընտրութիւնը անոր իմացելէ յետոյ՝ կ'ըսէ որ Լեոնալիբանանի մէջ զլուսնուց կաթողիկէ ժողովուրդին բարբորութեանը համար ամէն պէտք եղած ջանք պիտի ընէ (Մէճիթուայը Հավատիս, 1861, թ. 404): Յետոյ Ս. Աթոռէն կը ստանայ Ս. Գրիգորի Մեծ Սաչ աստիճանը (Մէճիթ. Հավ., 1865, թ. 586):

Մեծ. Պետութեանց այս ընտրութիւնը կ'ընէր  
գնահատելով Կարապետ Արթին Տաւուտեանի  
անձին մէջ գիտական բարձր արժանիքները,  
իր ցարգ պաշտօնավարած ասպարէզներու



ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԻՆ ՏԱՒՈՒՏ ՓԱՇԱ  
Կուսակալ Լեռնալիբանանի  
1861—1868

մէջ արտաբերած մեծ տաղանդը եւ իր իսկ  
անձին կիրթ ու ազնուական յատկութիւն-  
ները:

Առաջին անգամ էր որ հայ մը այսքան  
բարձր պատուոյ կը հասնէր. առաջին անգամ  
էր նաեւ որ Լեռնալիբանան քրիստոնէայ ընդ-  
հանուր միակ կառավարիչ մը կ'ունենար:

Վսեմ. Կարապետ Արթին Տաւուտեան  
Փաշայի այս ընտրութիւնը ընդհանուր եւ մեծ  
ուրախութիւն պատճառեց թէ՛ հայ եւ թէ՛  
նաեւ օտար շրջանակներու մէջ, ուր 1845էն  
ի վեր ճանչցուած եւ գնահատուած էր իբրեւ  
արժէքաւոր օրէնսդէտ գիտնական եւ զիւս-  
նազէտ պետական անձ:

Հարկ է հոս շեշտել, որ թէպէտ առաջին  
անգամ էր որ հայ մը այսքան բարձր պա-

տուոյ աստիճանի մը կը հասնէր, սակայն ա-  
ռաջին անգամ չէր որ հայ մը Թուրք Կայսե-  
րական Պետութեան մէջ պաշտօնի եւ պա-  
տուաստիճանի կ'արժանանար: Հայը շատ  
հին ժամանակներէ ի վեր սիրուած ու գնա-  
հատուած էր Թուրքիոյ մէջ, ուր իրեն յանձ-  
նուած են շատ կարեւոր ու պատասխանատու  
պաշտօններ:

Հեռեւոր պարզ հայաստեցութեան  
պէտք է վերագրել Journal de Francfortի  
(1861 Յուլ. 21) արտայայտութիւնը, որ  
միակն ըլլալով կը դրէր, թէ «Ո՛չ Մարտի-  
ները եւ ոչ Տիւրքները զո՛հ չեղան իրենց  
նորընտիր ընդհանուր կառավարչէն. վասն  
զի Տաւուք փաշան Հայ մըն է. այսինքն այն-  
պիսի ազգայնութեան մը կը վերաբերի որ,  
Թուրքաստանի (Թուրքիոյ) մէջ հրեայ ազ-  
գայնութեան կարգը դատուած է. կամ ուրիշ  
բառերով գրուելով՝ Հայերը չեն կրցեր  
երբեք մահմետականաց յարգութիւնը ձեռք  
բերել, միեւնոյն պատճառներով, իրաւացի  
կամ անիրաւ, որ Հրեաները չեն կրցեր յար-  
գութիւն ստանալ Տաճկաց առջեւ»<sup>50</sup>:

«Ազգասիրական պատասխան մի» վեր-  
նագրով Զմիւռնիոյ «Արշալոյս Արարատեան» ի  
խմբագրութիւնը սքանչելի պատասխան մը  
տուած է Journalի, զոր հոս յառաջ կը բե-  
րենք.

«Ժուրնալ տը Ֆրանսֆոր օրագիրը՝ եթէ  
անուանարկութեան ուղով չէ գրած յիշեալ  
տողերը, անտարակոյս պիտի ցաւի իմանա-  
լով որ, անգիտութեամբ, շատ սխալ եւ վա-  
տահամբաւիչ դատողութիւն մը ըրած է  
Հայոց վրայօք: Վասն զի Հայերը՝ Թուրքաս-  
տանի մէջ գտնուող բոլոր ազգայնութիւն-  
ներէն ամենէն հաւատարիմ, ամենէն գոր-  
ծունեայ ու քաղաքակրթեալն է, եւ մահմէ-  
տականները այս պատճառաց համար շատ կը  
սիրեն եւ կը յարգեն զՀայերը: Իրրեւ ապա-  
ցոյց այս մեր զրուցածներուն, կրնամք յա-  
ռաջ բերել թէ օսմանեան կառավարութիւնը  
ի վաղուց անտի մեծամեծ պաշտօններ յանձ-  
նած է Հայոց ազգին, որոնցմէ շատերը  
թուրքերէն դրել կարգալ եւս զիտեն: Կայ-  
սերական փողերանոցին տեսչութիւնը, վա-  
նօզապետութիւնը, կայսերական շինուածոց  
ճարտարապետութեան պաշտօնը, Ֆէսի մեծ  
գործարանին եւ ուրիշ արքունի գործարանաց  
վերատեսչութիւնը, վալիտէ Սուլթանին եւ

<sup>50</sup> Տե՛ս Արշալոյս Արարատեան, անդ՝ 1861,  
թ. 655:

նախարարաց սեղանաւորի պաշտօնը եւայլն,  
եւայլն, Հայոց ձեռքը յանձնուած են մինչեւ  
ցայսօր, որոց մէջ բաց ի էֆէնտիութենէ,  
Պէյի եւ Փաշայի բարձր աստիճաններ եւս  
ստացողներ կան:

«Ասոնցմէ ի գատ՝ յայտնի է որ Բարձրա-  
գոյն Դուռը, հաւանութեամբ Եւրոպիոյ  
գլխաւոր տէրութեանց՝ Հայ մը ընտրեց եւ  
անոր յանձնեց Լիբանանու ընդհանուր կառա-  
վարչի բարձր ու փափուկ պաշտօնը. ուստի  
այս ընտրութիւնը միթէ բաւականէն աւելի  
չի՞ ցուցներ որ քե՛զ օսմանեան կառավարու-  
թիւնը եւ քե՛զ Եւրոպիոյ տէրութիւնները յար-  
գութիւն եւ համարում ունին Հայ ազգայնու-  
թեան վերայ:

«Աւելորդ կը համարիմք հայկազուն Տա-  
ւուք փաշային անձնական արժանաւորու-  
թեանը վրայօք խօսիլ. քանզի ամեն մարդ  
զիտէ քե՛զ բանիբուն, լեզուագէտ, երեսելի  
անձ մըն է, եւ իրեն խնամօքը յանձնուած  
այս ծանր պաշտօնը յաջողութեամբ ի գործ  
պիտի դնէ»<sup>51</sup>:

Journal de Francfortի պատասխան մը  
եւս տուած է մէկը Փրանսերէն լեզուով Իզ-  
միրէն՝ նոյն ատեն Կ. Պոլիս լոյս տեսնող  
Courrier d'Orient թերթին մէջ. կու տանք  
հայերէն թարգմանութիւնը. «Փրանքֆորթի  
լրագիրը... աւելի լաւ է իր ձեռնհասութեան  
սահմանին մէջ կենալ, քան թէ երթալ այն-  
պիսի ժամանակագրական սխալներու մէջ  
էլնալ, որոնք Արեւելքի այժմեան վիճակին  
ճանօթ եղողներուն ծիծաղը կը շարժեն:  
Առանց խօսելու այն ամէն հայեազգեաց վրայ,  
որոնք բարձր պաշտօններ կը վարեն տէրու-  
թեան մէջ, ո՞վ չզիտեր որ այսօրուան օրս  
Հայոց ազգը մեծաքայլ կը յառաջագի՞մէ լու-  
սաւորութեան ու քաղաքակրթութեան ճամ-  
բուն մէջ»<sup>52</sup>:

Պարզ հարեւանցի գաղափար մը տալու  
համար թէ Հայերը ո՛րքան յարգ եւ վատա-  
հուծութիւն կը վայելէին Թուրքիոյ մէջ՝ թող  
ներուի մեզ ալ քիչ մը շեղելով մեր նիւթէն՝  
յիշել քանի մը անուններ եւ պարագաներ ի  
պատասխան ամենազրի Journalներու:

Ամէնէն առաջ սա ըսենք որ առաջին ան-  
գամ չէ որ օտար թերթ մը զարմանք կը  
յայտնէ Հայու մը այսքան բարձր պատուոյ  
հասնելուն Օսմանեան Պետութեան կողմէ:  
1847ին Ապտուլ Մէճիտ Կայսրը՝ «ցանկանա-

<sup>51</sup> Անդ:  
<sup>52</sup> Մալիս, 1861, թ. 499:

լով իւր կայսերական դոհունակութեանը ա-  
պացոյց մը տալու վսեմափայլ Տիւրքեանց իշ-  
խանագուն գերդաստանին... բարեհաճեցաւ  
յունիսի 16ին այցելութեան երթալու յիշեալ  
մեծապատիւ պայազատաց Առնաւուտ գեղի  
տունը: Նոյն ամսու 21ին շարաթ օրը Նորին  
Վեհափառութեան մայրը օգոստափառ Վա-  
լիտէ Սուլթանն ալ ընկերութեամբ կայսերա-  
կան պալատի քանի մը երեսելի տիկնայց՝  
այցելութեան գնաց Տիւրքեանց ազնուափայլ  
տիկիներուն, եւ անոնց պատրաստած բազ-  
մածափ փառաւոր նախաճաշիկը եւ ճաշը  
մարդասիրարար ընդունելով, ըստ ամենայն  
մասին խիստ գոհ եղաւ այս ազատագրի գեր-  
դաստանին համեստափայլ գմայելի վար-  
մունքէն, որ հայկազուն ազնուական տիկնայց  
ընկան ձիրք մըն է: Օգոստափառ Վալիտէ  
Սուլթանը՝ իւր մեկնելէն առաջ ի նշան բա-  
րեհաճութեան աղամանդեայ մեծազին տուփ  
մը շնորհեց Տիւրքեանց Կարապետ Չէլչպիին,  
նմանապէս աղամանդեայ զարփ մը Պօղոս  
Չէլչպիին եւ մինելի զարփ մը Միհրան Չէ-  
լչպիին<sup>53</sup>: Արդ, այս դէպքը առիթ առնե-  
լով Morning Post անգղիերէն թերթը՝ ան-  
վայել լեզու մը գործածած էր Տիւրքեան ազ-  
նուական գերդաստանին դէմ, որուն, բնա-  
կանաբար, չէր ուշացած հայ մը պատշաճ  
պատասխանը տալու<sup>54</sup>:

Տիւրքեան գերդաստանի անդամները Ժէ.  
դարէն ի վեր արքունի ոսկերիչներ եղած  
են<sup>55</sup>: Իրենց յանձնուած է յետոյ նաեւ պե-  
տական փողերանոցը, արքունի հարկահա-  
նուքիւնը, դրամափոխութիւնը, մետաքսի  
մաքսապետութիւնը: Անոնք կը կոչուէին ար-  
քունի սեղանաւոր (հիւնքեար սարրաֆը)<sup>56</sup>:  
Այս առիթ յիշենք որ 1789ին հայ մըն է նաեւ  
թուրք արքունի բժիշկը — Պօղոս Անտօ-  
նեան-Շաշիեան, ինչպէս յետոյ իր որդին՝  
Մանուէլ Շաշեան<sup>57</sup>:

Թուրքիոյ վստօղապետութիւնը Տաւտեան  
հոչակաւոր գերդաստանին յանձնուած էր  
իրրեւ տեսակ մը ժառանգական սեպհակա-  
նութիւն արդէն Սուլթան Սէլիմ Գ. էն (1789—

<sup>53</sup> Արշալոյս Արարատեան, 1847, թ. 289:  
<sup>54</sup> Տե՛ս Հայաստան, Կ. Պ. 1847, թ. 20—73:  
<sup>55</sup> Հ. Գ. Մ. Վ. Մէնչվիշեան, Ազգարանութիւն  
ազնուական զարմին Տիւրքեանց, Վիեննա 1890, էջ 6—7:  
Յ. Գ. Մ., Մասնական Պատմութիւն Հայ մեծատուն-  
ներու 1400—1900, Կ. Պ. 1909, էջ 33—34:  
<sup>56</sup> Հայաստան, անդ. Ժամանակի Հանդէս Հայրե-  
նանուէր, Կ. Պ. 1863, թ. 2:  
<sup>57</sup> Ասկերեան, Հասունեան Քաղաքականութիւն,  
էջ 120: Հանդէս Ամսօրեայ, Վիեննա 1893, էջ 248—  
249:

1807)<sup>58</sup>: Սուլթան Ապտիւլ Մէճիտ (1839—1861) իրենց կը յանձնէ նաև Պողոզիչին գտնուած պետական կաշիի գործատան եւ Նիկոմիդիոյ չուխայի գործատան վարչութիւնը<sup>59</sup>: Որո՞նք ծանօթ չէ Պալեան անունը, սրոնց կառուցած Կ. Պոլսոյ պալատներու շէնքերէն վրայ ա՛յնքան սքանչացած են օտար օգոստափառ այցելուներ: Ասոնք Ժ.Լ. դարու սկիզբէն արքունի ճարտարապետներ եղած են<sup>60</sup>:

Թուրք Պետութիւնը, տակաւին 1860էն շատ առաջ, քաղաքական կարգ մը կարեւոր պաշտօններ ալ վստահած էր Հայոց: 1840ական թուականներուն Բերլինի թրքական դեսպանատան թարգմանի եւ քարտուղարի պաշտօնեայ է Կարապետ Արթին Տաւուտեան<sup>61</sup>: 1840ին Վիեննայի թուրք դեսպանատան մէջ թարգման է Չեւոր Մանասեան, իսկ 1843—1845ի տեսները Վիեննայի Օսմանեան դեսպանատան առաջին թարգմանն է — Աւետիք Շահումեան<sup>62</sup>, որուն կը յաջորդէ 1845ին դարձեալ հայ մը՝ Մանասէ<sup>63</sup>: Պարսի թուրք դեսպանատան առաջին թարգմանն է յիշեալ Շահումեան<sup>64</sup>, որուն տեղ նոյն պաշտօնը կը վարէ յետոյ Յակոբ Կոճիկեան<sup>65</sup>:

Թուրքիոյ երկրագործական ժողովքին անդամ է Յովսէփ Ասկէրեան<sup>66</sup>: Արտաքին գործոց պաշտօնարանի թարգման Սրապիոն Մանասեան ի վարձ լաւ պաշտօնավարութեան 30.000 դրոշ պարգև կը ստանայ Սուլթանէն<sup>67</sup>: Բարձ. Իրան Բերլինի դեսպանութեան պաշտօնը վարած է ատեն մը

<sup>58</sup> Գրիգոր Մարգարեան, Օսմանեան Պատմութիւն, Կ. Պ. 1912, էջ 170, ծանօթ 1:  
<sup>59</sup> Արշալոյս Արարատեան, 1841, թ. 55, 96. 1842, թ. 113. 1844, թ. 191. 1845, թ. 225: Պէրպէրեան, անդ՝ էջ 387—388:  
<sup>60</sup> Պէրպէրեան, անդ՝ էջ 388: Արշ. Արարատ., անդ՝ 1841, թ. 15: Յ. Գ. Մ., անդ՝ էջ 97:  
<sup>61</sup> Հայրենասէր, Իզմիր 1843, թ. 3:  
<sup>62</sup> Արշ. Արարատեան, 1845, թ. 242: Վիեննայի Արտաքին գործոց նախարարութեան դիւանատան պաշտօնական թղթերուն մէջ ստուգեցինք որ 1840ին Վիեննայի թրքական դեսպանատան հայ թարգմանն է Չեւոր Մանասեան, 1843ին Աւետիք (Շահումեան) Գասպար եւ Միքայէլ. 1844—1845ին նոյն պաշտօնը ունին Աւետիք եւ Գասպար՝ առանց Միքայէլի, իսկ 1846—1857 քարտուղարի եւ թարգմանի պաշտօն ունին Մանասեան Գասպար, Աղեքանդր եւ Անտոն: (Տե՛ս Hof- und Staatsschematismus des österreichischen Kaiserthums, I. Theil, Wien 1840, էջ 237. 1843, էջ 211. 1844, էջ 212. 1845, էջ 212. 1846, էջ 214. 1847, էջ 219 եւն.):  
<sup>63</sup> Անդ:  
<sup>64</sup> Անդ՝ 1846, թ. 252:  
<sup>65</sup> Անդ՝ թ. 268: Բազմալէպ, 1856, էջ 154:  
<sup>66</sup> Անդ՝ թ. 266:  
<sup>67</sup> Անդ՝ թ. 272:

Կարապետ Արթին Տաւուտեան<sup>68</sup>: Բեղզիոյ Օսմանեան դեսպան եւ յետոյ կայսերական հեռագրատանց վերատեսուչ է Վսեմ. Տիրան Պէյ<sup>69</sup>: 1856ին Թուրքիոյ առևտրական բարձրագոյն խորհրդոյ անդամ է Գրիգոր Աղաթոն. 1860ին անդամ ելեւմտական բարենորոգումներու խորհուրդին<sup>70</sup>:

1861էն սկսած այս շարքը կ'երկարի եւ Հայերը կը հասնին թուրք պետական վարչութեան ամենաբարձր աստիճաններուն ու պատիւներուն ըլլալով նոյն իսկ նախարարներ եւ ընդունելով վէզիրութեան, միւլիբրութեան, պալայի, իւլայի եւն եւն, բարձրագոյն աստիճաններն ու պատիւները<sup>71</sup>:

Իրբեւ լրացուցիչ տեղեկութիւն աւելցնենք որ բաց ի Թուրքիայէն՝ ուրիշ մահմետական երկրի մը մէջ ալ — Եգիպտոս — Հայերը մեծապէս զնահատուած, բարձր պաշտօններու եւ պատիւներու հասած էին արդէն Ժ.Թ. դարու սկիզբը: Եգիպտոսի փոխարքայ Մէհմէտ Ալի փաշա, հռչակաւոր քաղաքագէտը (1769—1848) իրեն սկզբունքըրած էր իր կառավարած երկիրը ծաղկեցնելու, յառաջացնելու եւ զօրացնելու համար ընակիչներու ազգայնութեան կամ կրօնքին չնայելով՝ ամէնուն ալ հաւասար քաղաքական իրաւունք տալ. Ժիր ու յաջողակ մարդիկը, ի՛նչ ազգէ ու կրօնքէ ալ ըլլան՝ քաղաքական ամենաբարձր պաշտօններու եւ պատիւներու հասցնել: Ինքը իր այս սկզբունքըր գործադրելով՝ շատ մը Հայեր ամէն տեսակ պաշտօններու բարձրացուցած եւ լաւարդիւնք տեսած էր: Անոր համար Օսմանեան կառավարիչներուն ու մեծամեծներուն հետ խօսելու առիթ ունեցած ատեն միշտ կը կրկնէր. «Քրիստոնեայ Հայազգի պաշտօնեաներ ընտրեցէք. անոնք իրենց պաշտօնն աւելի ճշգրտութեամբ, աւելի խղճով, աւելի անխոնջ ու անձնանուէր փութով կը կատարեն եւ տէրութեան գործերը հսկայի քայլով յառաջ կը տանին<sup>72</sup>»: Փոխարքան 1856ին Պարսիս գտնուած ատեն Մուրատեան Վարժարան այցելելով՝ իրեն եղած մեծարանքներուն շնորհակալ ըլլալով՝ կ'ըսէ ի մէջ այլոց, «Պէտք է որ մտքերնէս չհանենք ա-

<sup>68</sup> Անդ՝ 1847, թ. 289: Երոպա, 1848, թ. 21:  
<sup>69</sup> Մասիս, 1862, թ. 566: Արշ. Արարատեան, 1864, թ. 735:  
<sup>70</sup> Անդ: Յառաջ, Պարսիս 1948 Նոյեմբ. 26:  
<sup>71</sup> Տե՛ս այս մասին մանրամասնօրէն յատկապէս՝ 1906ի Ընդարձակ Օրացոյց Ս. Փ. Հիւանդանոցի, Կ. Պ. էջ 305—328:  
<sup>72</sup> Երոպա, 1850, թ. 52:

մենեւին մեծին Մահմուտայ այն խօսքը որ կ'ըսէր. թէ՛ Մահմետականն ու քրիստոնեայն միայն մղկրթի ու եկեղեցեաց մէջը կը ճանչնամ. անկէց դուրս՝ ամէնքն ալ մէկ եղբարք են»: (Բազմալէպ, 1856, էջ 154):

Իր արտաքին գործոց պաշտօնեան էր Եւուսուֆեան Պօղոս Պէյ<sup>73</sup>, որուն մահուամբ (1844ին) Ֆերիփի աստիճանով արտաքին գործոց եւ վաճառականութեան նախարար կ'ըլլար Արթին Պէյ<sup>74</sup> կաթ. Հայը, որ նախապէս Ելեւմտից եւ Հաշուակալութեան ճիւղերուն մէջ մեծ ծառայութիւններ մատուցած էր Եգիպտական Պետութեան: Ապտիւլ Մէճիտ իրեն կը շնորհէ 1849ին պալայութեան բարձր աստիճանը<sup>75</sup>: Երամեան Գէորգ Ամիրայ, սեղանաւոր փոխարքային, 1846ին Սուլթանէն կը ստանայ Նիշանի Իֆթիխար<sup>76</sup>, յետոյ ալ Իւլայի առաջին աստիճանը<sup>77</sup>: Յիշենք իրբեւ վերջինը, անուն մը եւս — Նուպար Փաշա — որ արդէն հոմանիչ է Եգիպտոսի ծաղկման ու բարգաւաճման եւ որ բացի ուրիշ շատ մը պաշտօններէ՝ վարած է Վիեննայի դեսպանութիւնը, եղած նուիրակ Բ. Իրան քով, յետոյ բարձրացած արտաքին գործոց նախարարութեան՝ ստանալով կայսերէն իւլայի առաջին աստիճանը, երկրորդ կարգի մէճիտէի պատուանշանը եւ ի վերջոյ փաշայութիւն եւ միւլիբրութիւն<sup>78</sup>:

Այսքանը բաւական է իրբեւ պատասխան ամէն դարու Journalներու:

Իսկ թէ Լիրաննի ընակչութիւնը, յատկապէս Տիւրքիներն ու Մարոնիտները ո՛րքան զոհ կ'ըլլան Վսեմ. Կարապետ Արթին Փաշա Տաւուտեանի կառավարութեանէն՝ յընթացս պիտի տեսնենք: Շարունակենք ուրեմն իր պատմութիւնը:

Վսեմ. Կարապետ Արթին Փաշա Տաւուտեանի Լիրաննի կառավարիչ անուանումի կարեւոր դէպքը հետեւեալ կերպով յիշատակած են ժամանակակից հայ թերթերը: Կոստանդինուպոլսոյ «Մասիսը»<sup>79</sup> կը գրէր հին տոմար Յունիս 14 թուականաւ. «Կայսերա-

<sup>73</sup> Արշալոյս Արարատեան, 1840, թ. 6:  
<sup>74</sup> Եւուսուֆ Արթին փաշա, Արթին Պէյ, Վիեննայի 1896, էջ 4: Իր մասին տե՛ս Wiener Zeitung, 1850, Հոկտ. 17, թ. 245:  
<sup>75</sup> Ն. Մ. Վ. Նուրիխան, անդ՝ էջ 834: Հայկ Տեր-Աստուածատրեանց, Բառարան Հայ Կենսագրութեանց, Թիֆլիզ 1904, էջ 147:  
<sup>76</sup> Արշ. Արարատեան, 1846, թ. 266:  
<sup>77</sup> Մասիս, 1862, թ. 554:  
<sup>78</sup> Գիտակ, 1873, թ. 651: Բազմալէպ, Վենետիկ 1899, էջ 83—84:  
<sup>79</sup> 1862, թ. 488:

կան հրամանաւ՝ հեռագրաց վերատեսուչ Տալուի Կարապետ էֆէնան Լիրաննու կառավարիչ անուանեցաւ Միւլիբրութեան աստիճանաւ. Շարաթ օրը Վսեմ. Տալուի Փաշան հանդիսիւ Բ. Իուուր երթալով իր բարձր պաշտօնին ու աստիճանին վերաբերեալ կայսերական հրովարտակն ստացաւ, եւ իր շնորհակալութիւնները բարձ. Մեծ. Եպարքոսին եւ արտաքին գործոց պաշտօնէին մատուցանելէ ետեւ՝ հեռագրի դիւանը դնաց, ուր իր հին գործակալներուն շնորհաւորութիւնը ընդունեցաւ»: Նոյն քաղքէն թրքախօս Միւնատիյի Էրեփիյա կը ծանուցանէր<sup>80</sup>. «Թէլէկրաֆ նազըրը Տալուի Կարապետ էֆէնաի պու տէֆա պա իրատէյի Սէնիյէ վէզիրիք բիւթպէսիյէ ճէպէլի Լիպաննա գայիմագամ թային պուլլուրուշ օրմաղին, պու ճուճաա էրթէսի կիւն բէսմի իճրասը կէօրիւլիւլուր»:

Նոյն բառերով ծանուցած են նաև Իգմիրի Արշալոյս Արարատեան<sup>81</sup>, Կ. Պոլսոյ Մէմուայը Հավատիս<sup>82</sup> եւ Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց (Կ. Պոլիս 1861, թ. 170):

Վսեմ. Կարապետ Ա. Փաշա Տաւուտեան 1861 Յունիս 29ին (ն. տ.) պատիւ կ'ունենայ ներկայանալու Վեհ. Կայսեր, որմէ վերջ Յունիս 1ին, Երկուշարթի օր, ծովակալութեան «Կարս», նաւով ճամբայ կ'իլլէ դէպ ի Բէյրութ՝ ընկերակցութեամբ Մահակ Ապրոյի եւ Դիւս. Յակոբ Տաւուտի<sup>83</sup>: Ճամբան բաւական նեղութիւն կը կրեն գէշ օդին պատճառաւ: Յունիս 5, Ուրբաթ իրիկուն, կը հասնին Բէյրութ: Բէյրութի մէջ ընդունելութիւնը փառաւոր կ'ըլլայ: Լսենք Բէյրութէն օտար ականատես թղթակցի մը խօսքերը. գրուած 9 Յունիսին.

Par le vapeur de l'Amirauté, le Kars (ancien Baroness Tecco) sont arrivés ici, vendredi soir, Son Excellence Daoud-Pacha, le nouveau gouverneur de la Montagne, et Abro-Effendi, délégué par Fuad-Pacha à Constantinople lors du départ des commissaires européens pour cette capitale. Le lendemain, Daoud-Pacha a débarqué au bruit

<sup>80</sup> 1861, թ. 78:  
<sup>81</sup> 1861, թ. 651:  
<sup>82</sup> 1861, թ. 403: Հմմտ. նաև Ն. Մ. Վ. Նուրիխան, անդ՝ 570:  
<sup>83</sup> Արշալոյս Արարատեան, 1861, թ. 652: Մէճիտ. Հավատիս, անդ՝ թ. 403: Հանդէս Ամսօրեայ, 1898, էջ 76:

d'une salve de dix-sept coups de canon, et s'est rendu chez le commissaire impérial<sup>84</sup>.

Բէյրութէն ընդարձակ թղթակցութիւն մը այս մասին Կ. Պոլսոյ Courrier d'Orient-ի կը քաղենք Մէծմուսյը Հալապիսէն, որ կը դրէ<sup>85</sup>. «Լեոնալիբանանի կուսակալ Վսեմ-Տաւուտ փաշա եւրոպական Յանձնախումբի անդամներուն հետ Յուլ. 5ին Ուրբաթ իրիկուան դէմ Բէյրութ հասաւ: Ծամբան օդի անհարթութեան հանդիպած ըլլալով՝ շատ նեղութիւն քաշած է: Երկրորդ օրուան առտուն, մինչ բերդերէն ու նաւատորմէն թնդանօթները կ'որոտային՝ իր հեռեւորդներուն ու բարի գալուստի եկողներուն հետ մէկտեղ Բէյրութի նաւամատոյցը ցամաք ելաւ: Իր բարձր աստիճանին համաձայն պատիւներ ընելով՝ զինքը դիմաւորեցին Սայդայի Վալի փաշան եւ բոլոր քաղաքական ու զինուորական իշխանութիւններն ու քրիստոնէայ ազգաց պետերը. քաղքին պահպան զօրքն ալ բարեւի կեցած էր: Վսեմ. Տաւուտ փաշա ուղղակի Վսեմ. Փուսազ փաշայի բնակարանը գնաց եւ հոն ճաշեց, որմէ վերջ իրեն յատկացուած սպարանքը ելաւ եւ նոյն օրը մինչեւ իրիկուն այցելութիւն ընդունեցաւ: Պաշտօնական այցելութիւն տուին Վսեմ. Փուսազ փաշան, Բէյրութի կուսակալը, զօրավարներ, ծովակալներ, հիւպատոսներ, պատրիարքներ, արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ ամէն ազգէ, Տիւրքներու եւ Մարոնիտներու շէյխեր ու պետեր, եւն եւն: Յաջորդ օրը Կիրակի ըլլալով՝ Վսեմ. Տաւուտ փաշա Մարոնիտներու եկեղեցին պատարագ տեսնելու գնաց: Եկեղեցիէն ելլելէ վերջ՝ շատ մը անձեր, ամէն կարգէ ու աստիճանէ, այցելութեան գացին եւ բոլորն ալ քաղցր ու սիրալիբ ընդունելութիւն գտան անկէ, որով արգէն ժողովուրդին սէրն ու համակրանքը շահեցաւ: Տիւրքի եւ Մարոնիտ շէյխերը խաղաղութեան ու հաշտութեան յարմար լեզու գործածեցին»:

Յուլիս 18ին (նոր տոմար) Բէյրութի Ծոճիներու հրապարակին վրայ մեծ հանդիսութեամբ տեղի կ'ունենայ ընթերցումը Լիբանանի նոր վարչութեան համար գծուած կանոնադրութիւններուն, ինչպէս նաեւ կայսեր Ֆերմանն, որ Տաւուտ փաշան Լեոնալի-

<sup>84</sup> Richard Edwards, La Syrie, էջ 375:  
<sup>85</sup> 1861, թ. 406: Տե՛ս նաեւ Միւնստիյի էր-թիյա, 1861, թ. 92: Մասիս, 1861, թ. 494: Արշ. Արարատեան, 1861, թ. 653:

բանանի Ընդհանուր Կառավարիչ կ'անուանէր: Այս հանդիսութեան ներկայ կ'ըլլան Բ. Դրան՝ Արտակարգ Յանձնախումբի նախագահ, Վսեմ. Փուսազ փաշան, Սայդայի նահանգին կառավարիչ Ահմէտ փաշան, քաղաքական ու զինուորական բոլոր զլիսաւոր պաշտօնատարները, հինգ Մեծ Պետութեանց Արտակարգ Յանձնախումբի անդամներն ու եւրոպական հիւպատոսները: Նոյն օրը Վսեմ-Տաւուտ փաշա, ուղեկցութեամբ բազմաթիւ հետեւորդներու, կը մեկնի Դէյր-է-Կամար՝ իր պաշտօնական կայանը<sup>86</sup>: Իր բնակարանը կ'ըլլայ էմիր Բէշիրի հռչակաւոր հոյակապ պալատը<sup>87</sup>:

Տաւուտ փաշա՝ իր ներքին վարչական կազմը ընտրելէ յետոյ — որուն անդամ են Դիւտ. Յակոբ Տաւուտ եւ Պետրոս Աքքալի — իր առաջին գործը կ'ըլլայ այցելել Լեոնալիբանանի զլիսաւոր վայրերը, խօսիլ բոլոր պետերու հետ, ծանօթանալ ամէն մէկ տեղւոյ վիճակին ու կարիքներուն<sup>88</sup> հարկ եղած կարգադրութիւններն ընելու եւ Պոլսոյ մէջ հինգ Մեծ Պետութեանց ներկայացուցիչներուն ու Բ. Դրան միջեւ որոշուած կանոնադրութիւնները գործադրելու համար: Լեւան քաղաքական վարչութիւնը վեց վիճակի կամ գաւառի բաժնելով՝ իւրաքանչիւրին մէկմէկ կառավարիչ (միւսիբ) կը գնէ, հինգը քրիստոնէայ, մին տիւրքի: Լիբանան երկրի ազգային զօրքը կրթելու համար՝ Փրանսացի սպաներ կը հրաւիրէ՝ իրեն խորհրդոյ քարտուղարն ալ Փրանսացի գրագէտ մ'ընտրելով: Ծամբաներու եւ այլ շինութեանց ձեռք կը գարնէ: Ու շնորհիւ իր իմաստուն, խոհեմ ու անխոնջ ջանքերուն՝ կամաց կամաց ամէն կողմ բարեկարգութիւնը կը հաստատուի, խաղաղ ու անգորր կեանքը կը տիրապետէ եւ ընդհանուր գոհունակութիւնը կը ծաւալի<sup>89</sup>:

1862 Մայիս 18ին (հին տոմար) Բէյրութէն կը գրեն Արշալոյս Արարատեանի. «...Լիբանանու մէջ եւս հանդարտութիւնը օրըստօրէ կը հաստատուի. եւ հայկազուն Տաւութ փաշան, իւր խոհեմ կառավարութեամբ՝ կարող եղաւ յիշեալ լեւին թէ՛

<sup>86</sup> La Syrie, անդ՝ էջ 376: Արշալոյս Արարատեան, թ. 654:  
<sup>87</sup> Միւնստիյի էրթիյա, թ. 92:  
<sup>88</sup> Հմմտ. Արշ. Արարատեան, անդ՝ թ. 656: Մէմ. Հալապիս, 1861, թ. 416:  
<sup>89</sup> Տե՛ս Արշ. Արարատ., 1862, թ. 659, 670, 1863, թ. 700: Մէմ. Հալ., 1862, թ. 430: Մասիս, 1861, թ. 505: La Syrie, էջ 388—390:

քրիստոնէայ եւ թէ՛ Տիւրքիւ բնակչաց համակրութիւնը ձեռք բերելու, որչափ որ կարելի է<sup>90</sup>»:

Թէպէտ երբեմն խոչընդոտներու կը հանդիպէր նա իր այդ բազմակնճիւ գործին մէջ՝ դժուարընտել ու ապստամբ ժողովուրդները կարգի կանոնի, քաղաքակիրթ կենցաղի վարժեցնելու համար՝ սակայն իր վարչական հանճարովն ու խոհեմական վարմունքովը կը գտնէր ի վերջոյ յարմարագոյն ուղին այդ դժուարութիւններն ալ հարթելու համար: Թուրք Կայսերական Կառավարութիւնն ալ միշտ թեւ թիկունք կը հանդիսանար ու կը նպաստէր իր յաջողութեանցը<sup>91</sup>:

Պոլսոյ «Մասիս» իր մէկ թուին մէջ կը գրէր, թէ «Լիբանան ալ կատարելապէս հանդարտած է Վսեմ. Տաւութ փաշային խոհեմ կան ու կտրուկ վարմանքովը: Ուստի կը յուսացուի որ յիշեալ կուսակալը կրնայ այսուհետեւ Լիբանանու համար սահմանուած կանոնադրութիւնը անարգել գործադրել<sup>92</sup>»:

Դժբախտաբար «անարգել գործադրել» կարելի չէ եղած: Լեւան ժողովուրդը սկիզբները արգելքներ յարուցած ու դժուարութիւններ պատճառած է: Վսեմապատիւ Տաւուտ փաշա Ղազիրէն մինչեւ ծով կառքի ճամբայ շինելու ձեռնարկ մ'ըրած էր յօգուանոյն իսկ Ղազիրցիներուն: Բայց անոնք հակառակած ու ամէն միջոցներով արգելք ըլլալ ուղած էին, ստիպուելով, բնականաբար, ի վերջոյ տեղի տալ ու հպատակել: Հետաքրքրական են այս մասին Բէյրութէն Կ. Պոլսոյ Courrier d'Orient-ի գրուած նամակները<sup>93</sup>:

1863ին Լիբանանի ամբողջ ժողովուրդը, առանց ցեղի ու կրօնքի զանազանութեան, այնքան գոհ էր Վսեմ. Տաւուտ փաշայի կառավարչութենէն որ Լիբանանէն Պոլիս գրուած նամակ մը կը յայտնէ թէ ժողովուրդը իրմէ զատ ուրիշ կառավարիչ չ'ուզեր: Նամակագիրը մանրամասնելով կը բացատրէ թէ ինչպէս մինչեւ այդ ատեն ուրիշ կառավարիչներու կողմէ բնաւ երբեք չտեսնուած կերպով ժողովուրդին կարիքները կը հոգայանիտիբ հարուստին ու աղքատին, քրիստոնէին ու մահմէտականին հոգերն ու ցաւերը

<sup>90</sup> Անդ՝ թ. 676:  
<sup>91</sup> Հմմտ. La Syrie, էջ 389—90: Արշ. Արարատ., 1862, թ. 684: Մասիս, 1862, թ. 552, 555:  
<sup>92</sup> 1862, թ. 548:  
<sup>93</sup> Մասիս, անդ՝ թ. 554: Տե՛ս նաեւ Մէմուսայը Հալապիս, 1862, թ. 465, 466:

մտիկ կ'ընէ, դատերը կը տեսնէ, ամէնքը իրարու հետ կը հաշտեցնէ եւ ժողովուրդը վստահութեամբ ու համարձակութեամբ իրեն կը դիմէ ամէն տեսակ խնդրոց համար: «Ճէպէլին հիշ պիր թէրաֆընտան», կը վերջացնէ նամակագիրը, «խօշնուտ օրմայան պիր ըիմսէ գալմամըլ տըր<sup>94</sup>»:

Թուրքիոյ Կայսերական Կառավարութիւնը բարձր գնահատանքով մը իր գոհունակութիւնը յայտնած է Վսեմ. Կարապետ Արթին փաշա Տաւուտեանի՝ Լիբանանի վարչութեան համար՝ շնորհելով անոր Մէծիտիէ կարգին առաջին աստիճանի շքանշանը: Իսկ միւրի Արշալոյս Արարատեան կու տայ այս ուրախ լուրը, գրելով<sup>95</sup>. «Լիբանանու ընդհանուր կառավարիչ Վսեմապաշայ Տաւութ փաշային Մէծիտիէ կարգին առաջին աստիճանի շքանշանը շնորհուեցաւ»:

1864 Յունիսին Լիբանանի կառավարութեան երեք տարին լրացած ըլլալով՝ Բարձ. Դուռը, համաձայնութեամբ Մեծ Պետութեանց դեսպաններուն, նոյն տարւոյ Յունիս 9ին յաւելեալ 5 տարուան համար նոյն վարչութիւնը դարձեալ Վսեմ. Կարապետ Արթին Տաւուտեանի կը յանձնէ կայսերական հրովարտակով<sup>96</sup>: Այս լուրը մեծ ուրախութիւն կը պատճառէ ամբողջ Լեոնալիբանանի մէջ, ուր տօն ցնծութեան կը կատարեն հանդէսներով ու խրախճանքներով եւ Տաւուտ փաշայի հանդէպ համակրանքի ցոյցերով<sup>97</sup>:

Այս նոր շրջանին կը կրկնապատկէ Վսեմ. Կարապետ Տաւուտեան իր գործունէութեան ջանքերը Լեոնալիբանանի բարեկարգութեան համար: Կը ջանայ վերջնականապէս հաշտեցնել իրարու հետ հակառակորդ տարրերը: Ծշղել իւրաքանչիւր գաւառի, քաղաքի ու զիւղի եկամուտն ու տուրքի չափը՝ վերցնելու համար դժգոհութեան զլիսաւոր պատճառներէն մէկը: Կազմակերպել ներքին վարչական կազմը: Բարեփոխել հասարակական ու ընկերային կեանքը: Բարձրացնել իր խնամքին յանձնուած ժողովուրդներուն մտաւոր ու հոգեկան զարգացումի մակարդակը: Զարկ տալ անոնց տնտեսական միջոցներու զարգացման եւ ստեղծել լաւագոյն կեանքի պայմաններ:

<sup>94</sup> Մէմուսայը Հալապիս, 1863, թ. 513:  
<sup>95</sup> 1864, թ. 727:  
<sup>96</sup> Անդ՝ թ. 736: Մէմուսայը Հալապիս, 1864, թ. 567: Տե՛ս Բ. Դրան 1864 Յունիս 6ի արձանագրութիւնը (protocole) այս մասին՝ Recueil des traités, անդ՝ էջ 405. Հմմտ. անդ՝ էջ 406:  
<sup>97</sup> Մէմուսայը Հալապիս, անդ՝ թ. 578:

Առ այս յաջողելու համար ըրաւ Տաւուս Փաշա այն ամէն բան, ինչ որ կարելի էր ընել մարդկօրէն եւ իր ժամանակի պայմաններուն ներած չափով: Տուաւ նա իր ժողովուրդին իր լաւագոյնը:

Եւ՝ արդար ըլլալու համար՝ պէտք է ըսել թէ յաջողեցաւ ան, թէեւ ոչ իր ուզած չափովը: Ձեռք բերաւ այնպիսի լաւագոյն արդիւնք մը, որ դուրսէն ուրիշ ոչ ոք կարող ըլլար ձեռք բերել: Այն ընդհանուր գոհունակութիւնն ու մեծ համակրանքը, զոր դատաւնա ոչ միայն իր կառավարած ժողովուրդին, այլ եւ իր կառավարութեան շուրջը գտնուած դրացի ժողովուրդներուն քով՝ լաւագոյն սպացոյցն է ատոր:

Ժամանակակից թերթ մը կը գրէ իր դործի մասին. Լիբանանի լեռը յառաջուան ոչ մէկ ժամանակ այսպիսի հանգստաւէտութիւն ու անդորրութիւն տեսած էր: Ճամբաներ ու հեռագրաթերթի շինուած ըլլալով՝ շատ մը տեղեր իրարու կապուած են: Մեծ ու փոքր դատարաններ ամէն մէկ կողմ իրաւունքը իրեն կու տան: Ապահովութիւնը ընդհանուր ըլլալով՝ վաճառականութիւնը օրէօր կը զարգանայ: Ամէն տեղ դպրոցները բաց են եւ դիտութիւնը կը յառաջգիւծէ: Ծերերը իրենց տղաքը կը շնորհաւորեն, ըսելով թէ մեր կեանքին մէջ այսպիսի երանելի ժամանակ տեսած չենք: Վսեմապատիւ Տաւուս Փաշայի վարչութեան այս սքանչելի դործերը բոլոր եւրոպական թերթերու գովքն ու դրուատիքը կը կազմեն. եթէ քիչ մը ժամանակ ալ թողուի, կ'ըսեն, լեռը — կայսերական այս նահանգը — երկրին ամէնէն շէն ու մարդաշատ նահանգը պիտի դառնայ: Լեռան ժամանակագրութեան մէջ Տաւուս Փաշայի անունը շատ մեծ պատուոյ տեղ պիտի բռնէ<sup>98</sup>:

1867ի Հոկտեմբերին, Փրանսոյի Կայսր Նապոլէոն Գ. Վսեմ. Տաւուս Փաշայի կը շնորհէ Պատուոյ Լեգէոնի մեծ շքանշանը (Արշ. Արարատեան, 1867, Թ. 815):

Տաւուս Փաշայի կառավարութեան մօտ եօթը տարուան ընթացքին ձեռք բերուած այս փայլուն արդիւնքները, Լեռնալիբանանի այս նախանձելի վիճակը մեծ համակրանքով դիտած էին դրացի կառավարութեանց ժողովուրդները, որոնք կը տենչային իրենց միացումին լեռան կառավարութեան հետ<sup>99</sup>:

<sup>98</sup> Անդ՝ 1867, Թ. 709. տե՛ս նաեւ Թ. 710, 723: Մանգուլէի Էֆեմար, Կ. Պ. 1867, Թ. 533:  
<sup>99</sup> Մեծ Լաուուս, Հտր. 2, էջ 100:

Այս պարագան անշուշտ առիթ պիտի տար անհամաձայնութեան: Կը թուի թէ խկապէս ալ լուրջ անհամաձայնութիւն տեղի ունեցած է Տաւուս Փաշայի եւ Սուրիոյ ընդհանուր կառավարչին միջեւ, վերջինս սաստիկ հակառակ ըլլալով արեւմտեան միջամտութեամբ դրուած վարչութեան մը<sup>100</sup>: Վսեմ. Տաւուս Փաշա լաւագոյն կը համարի հրատարիլ (1867 Դեկտ.) : Թուրք կայսերական կառավարութիւնը, որ ա՛յնքան բարձր դնահատած էր Վսեմ. Տաւուս Փաշայի իմաստուն վարչութիւնը՝ կը մերժէ ընդունիլ անոր հրատարականը:

Այս խնդրոյ շուրջ 1867 Դեկտ. 31ին հեռագրական լուր մը՝ արուած Կրէտէէն Պոլսոյ Levant Heraldին՝ կը հրատարակէ Մէմուալը Հավատիս.

«Տաւուս փաշայի հրատարման լուրը երկու Հավաս հեռագրով հասած է. քանի մ'օր առաջ ալ Պոլսոյ մէջ այսպիսի լուր մը տարածուած ըլլալուն՝ կը կարծուի թէ հրատարման պատճառ եղած են երբեմնի տեղի ունեցած դժուարութիւնները<sup>101</sup>»:

Մէմուալը Հավատիս այս լուրը տալէ յետոյ՝ իր կողմէ կ'աւելցնէ. «Պիղճէ պու հավատիս պէօյլը թահգիլէ միւհթաճ տըր<sup>102</sup>»: Բայց նոյն թերթը իր 1868 Մարտ 18ին մէջ<sup>103</sup> կը ծանուցանէ թէ Վսեմ. Տաւուս Փաշա մայրաքաղաք (Կ. Պ.) պիտի դառնայ: Ատկէ քիչ վերջ — Ապրիլ 13ին — Ձմիւռնիոյ Արշալոյսը իր գանազան լուրերուն մէջ կը գրէ<sup>104</sup>. «Ամսոյս 4ին Ասորիքէն հասնող աւստրիական Վուլքանօ շոգեհաւուն մէջ կը դառնուէր Լիբանանու ընդհանուր կառավարիչ Վսեմ. Տաւուս փաշան, որ միեւնոյն շոգեհաւով Կ. Պոլիս դնաց». եւ Կ. Պոլսէն ստացած լուրն ալ տալով, կ'ըսէ. «... հայկազուն Տաւուս փաշան ամսոյս 8ին հասաւ ի մայրաքաղաք»:

Ինչպէս վերը գրեցինք՝ Տաւուս Փաշայի հրատարականը չէր ընդունած Բ. Դուռը՝ փափագելով որ շարունակէր նա իր կառավարչութիւնը: Կ'երեւայ թէ Պոլիս վերագարձին դարձեալ խնդրուած է իրմէ կրկին ստանձնել իր վարչութեան ղեկը: Եթէ հայ թերթի մը տուած լուրին հաւատանք՝ կայսերական կառավարութիւնը տակաւին հինգ

<sup>100</sup> Անդ՝  
<sup>101</sup> Մէմ. Հավ., 1868 Յունուար Թ. 728:  
<sup>102</sup> Անդ՝  
<sup>103</sup> Անդ՝ Թ. 740:  
<sup>104</sup> Թ. 829:

տարուան համար կ'երկնցնէ Տաւուս Փաշայի վարչութիւնը: Ահա թէ ինչ կը գրէ Փուլնը. «Լիբանանու կառավարիչ Վսեմ. հայազգի Տաւուս Փաշան՝ որոյ պաշտօնին յատկացեալ հինգ տարիները լրացած էին<sup>105</sup> եւ առժամանակեայ կերպիւ մայրաքաղաքս կ'գտնուի, օգոստ. Սուլթանին հրովարտակաւ հինգ տարի ալ պիտի վարէ իւր պաշտօնը: Նորին Վսեմութեան այս վերահաստատութիւնը մեծ սպացոյց մ'է իր յաջող եւ դոհացուցիչ կառավարութեան<sup>106</sup>»:

Տաւուս Փաշա, սակայն, ինչպէս կ'երեւայ, մնալով իր հրատարականին վրայ՝ յանձն առած չէ շարունակել Լիբանանի կառավարութիւնը: Վերոյիշեալ թերթը իր յաջորդ թիւերէն մէկ կողմէ մէջ կը գրէ արդէն. «Կ'ըսուի թէ՛ Լիբանանու կառավարիչ Վսեմ. Տաւուս փաշան հասարակային շինուածոց պաշտօնեայ եւ հեռագրատան ու թղթատարութեան վերատեսուէ պիտի անուանի փոխանակ հանգուցեալ Աղաթօն էֆէնտիի: Իսկ Լիբանանու կառավարութիւնը Մեծ. Փրանսոյ էֆէնտիի պիտի յանձնուի եղեր<sup>107</sup>»:

Այսպէս, ուրեմն, վերջացած կ'ըլլայ Վսեմ. Կարապետ Արթին Տաւուսեան Փաշայի արդիւնալից գործունէութիւնը Լեռնալիբանանի մօտ եօթը տարուան կառավարութիւնը: Երկար կ'ըլլար հօս խօսիլ այն մեծ նշանակութեան վրայ, որ ունեցաւ իր վարչութեան շրջանը Լեռնալիբանանի պատմութեան մէջ. այդ մասին գրուածներով լի է ժամանակակից արեւելեան թէ արեւմտեան գրականութիւնը, մանաւանդ օրաթերթերը:

Վսեմ. Կարապետ Արթին Փաշա Տաւուսեան Լիբանանի ընդհանուր կառավարութեան հրատարակիչ վերջ՝ Բ. Դուռը գինքը կը բարձրացնէ Թուրք Կայսերական Պետութեան Պորհրդարանի անդամութեան, անուանելով գինքը հանգուցեալ Վսեմ. Գրիգոր Աղաթօնի<sup>108</sup> տեղ հանրօգուտ շինու-

<sup>105</sup> Միտլ է թերթին տուած հաշիւը. Տաւուս Փաշայի հեղամեայ կառավարութեան լրանալուն տակաւն տարի մը կաք. հնգամեան սկսած էր 1864 Յունիսին:  
<sup>106</sup> Փուլնը, Կ. Պ. 1868, Թ. 146:  
<sup>107</sup> Անդ՝ Թ. 150:  
<sup>108</sup> Մէմ. Հավատիս, 1868, Թ. 748: Արշ. Արարատեան, 1868, Թ. 831 եւ 832: Փուլնը, 1868, Թ. 153: — Վսեմ. Գրիգոր Աղաթօն իրրեւ հեռագրական եւ թղթատարական պաշտօնեայ Պարիս գացած էր նոյն գործով: 1868ի սկիզբը կ'ընտրուի նաեւ հանրօգուտ շինութեանց նախարար: Պարիսէն գեո չվերադարձած՝ ծանրապէս կը հիւանդանայ: Թէեւ Ապրիլ 16ին հեռագիր մը լուր կու տար թէ բարելաւում առաջ եկած է (Մէմ. Հավատիս, 1868, Թ. 740. Արշ. Արարատեան, 1868, Թ. 829):

թեանց նախարար, հեռագրատանց եւ նախալատանց վերատեսուէ:

Ասով Վսեմ. Կարապետ Արթին Տաւուսեան մուտք կը գործէր Թուրք Պետութեան դահլիճէն ներս, ըլլալով անդամ Թուրք Կայսերական Պետութեան բարձրագոյն վարչական կազմին. գրաւելով պատուոյ աթոռ մը, որ աննախընթաց կարելի է կոչել՝ նկատելով որ ինքը առաջինն է, որ իրապէս ալ կը վարէ նախարարական պաշտօնը:

Ժամանակակից Atheneum անգղիերէն թերթը այս առթիւ կը գրէ<sup>109</sup>. «Տաւուս Փաշա... այս անգամ Օսմանեան Պետութեան դահլիճին անդամ ընտրուեցաւ: Ինքը արեւելեան քրիստոնեաներէն է: Այս բարձր պատուին ընտրուեցաւ նախ Աղաթօն, բայց Պարիսի մէջ մեռնելով՝ չկրցաւ պաշտօնը վարել: Այս բարձր պատուոյ աստիճանին հասնող Վսեմ. Տաւուս Փաշան արդէն բոլոր քրիստոնեաներու մէջէն առաջինն էր որ միջրութեան բարձր աստիճանը ընդունած էր: Թէեւ իրմէ առաջ ուրիշ քրիստոնեայ փաշաներ պատուոյ հասած էին, սակայն այս աստիճանը չունէին: Տաւուս Փաշա անունով հռչակաւոր անձը՝ Կարապետ Արթին Տաւուս օղլու՝ մայրաքաղաքի մէջ (Կ. Պ.) ծնած է եւ կրօնքով կաթողիկէ է»:

Մասնաւոր հրաւերով պատիւ կ'ունենայ Վսեմ. Կարապետ Արթին Փաշա Տաւուսեան ներկայանալ Սուլթան Ապտիլ Ազիզ Կայսեր իր Ելազգ Բէօշլիկի մէջ, ուր Կայսրը ի նշան բարձր գոհունակութեան իրեն կը նուիրէ Օսմանիէ կարգին մեծ ժապաւէնը<sup>110</sup>:

Իրրեւ նախարար հանրօգուտ շինութեանց եւ վերատեսուէ հեռագրատանց ու թղթատարութեանց՝ ընդարձակ սպարէզ եւ լայն ծրագիրներ կային գործունէութեան: Իր կրկնակ պաշտօններու յատուկ ծրագրով Վսեմ. Տաւուսեան 1868 Յուլիսին ճամբորդութիւն մը կ'ընէ Տրիեստի վրայով դէպ ի

տեան, 1868, Թ. 829) սակայն քիչ ետքը — Մայիս 4ին (նոր տոմար) — հեռագիրը կը գուժէր թէ նոյն ատուն տեղի ունեցած է մահը (Մէմ. Հավատիս, անդ՝ Թ. 741. Արշ. Արարատեան, Թ. 830. Փուլնը, Թ. 143): Կը թողուր այրի մը, մահն մը (Երուսաղ) եւ երկու աղջիկ, որոնց 5000 դրուշ ամաթոռքի կը կապէ թրքական կառավարութիւնը (Արշ. Արարատեան, Թ. 833. տե՛ս Յաւաթ, Պարիս 1948 Նոյ. 26):  
<sup>109</sup> Գժրատարար թերթին բնագիրը ձեռքի տակ չունենալով՝ կը քաղենք Մէմուալը Հավատիսէն. տե՛ս անդ՝ 1868, Թ. 748:  
<sup>110</sup> Արշալոյս Արարատեան, 1868, Թ. 836: Մէմ. Հավատիս, 1868, Թ. 751. հմմտ. Փուլնը, 1868, Թ. 152:

Եւրոպա<sup>111</sup>: Կը հանդիպի Վիեննա, ուր քանի մ'օր կը մնայ<sup>112</sup>. յետոյ կը մեկնի Պարիս<sup>113</sup>:



ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ ՏԱՌՈՒՏԵԱՆ  
Թուրք Խորհրդարանի Անդամ Հանրօգուտ Շինութեանց  
Նախարար  
1868—1871

Տաւուս Փաշայի այս ճամբորդութեան նպատակի մասին Վիեննայի Tagblatt կը գրէ. «Մենք լուր առած ենք որ Տաւուս Փաշայի այս կողմերը գալու մասին որքան ալ լուր տարածուած է թէ Ռումէլի երկաթուղիի ճամբու շինութեան համար է՝ սակայն նորին Վսեմապատուութիւնը Պարիս մեկնելով՝ յայտնի կ'ըլլայ թէ 125 միլիոն Փրանկի, այսինքն՝ հինգ միլիոն լիբայի նոր փոխառութիւն մը ընելով պիտի գրադի<sup>114</sup>»:

Իսկ Արշալոյս Արարատեան կը բացատրէ<sup>115</sup>. «Հրապարակային շինութեանց,

հեռադրութեանց եւ թղթատարութեանց տեսուչ Վսեմ. Տաւուս Փաշան մօտերս Փարիզ պիտի երթայ, թուրքաստանի մէջ օտարականաց թղթատարութիւնները դադարեցնելու համար: Այս խնդրոյս վրայօք բանախօսութիւնները (բանակցութիւն) հանգուցեալ Աղաթօն էֆէնտիին օրովը սկսած եւ յաջողութեամբ վերջանալու վրայ էին. ուստի Վսեմ. Տաւուս Փաշան այս բանախօսութիւնները շարունակելու պիտի երթայ»:

Վսեմ. Տաւուսեանի այս ճամբորդութեան նպատակն եղած է մէկ կողմէ թղթատարութեան յիշեալ նպատակին հետապնդումը, որուն համար Պարիս եւ Լոնդոն ալ անցած է<sup>116</sup>, միւս կողմէ եւ գլխաւորաբար Ռումէլի երկաթուղագծի շինութեան խնդրով գրադիլ, որուն համար 12 միլիոն լիբայի փոխառութիւն մը կնքած է աւստրիական, մաճառական եւ Փրանսական ընկերութեանց գրամատուցներէն<sup>117</sup>: Այս գործով գրադած է նա թէ՛ Վիեննա եւ թէ՛ Պարիս, իրեն ընկերունենալով իր քարտուղարը՝ ճարտարապետ Գալուստ Մարկոսեան<sup>118</sup>: 1868 Նոյեմբերին Տրիեստի վրայով Եւրոպայէն կը վերադառնայ Պոլիս: Կայսեր գեկուցումի ներկայանալէ վերջ՝ Դեկտեմբեր 7ին (հին տոմար) դարձեալ նոյն նպատակով կը մեկնի Եւրոպա<sup>119</sup>: 1869ի Ապրիլին կը վերադառնայ Պոլիս (Արշ. Արարատեան, Թ. 855), բայց Մայիսին կրկին Եւրոպա կը մեկնի (Մէնմ. Հավ., Թ. 794) նոյն գործով: Վերջապէս 1869ի ընթացքին յաջողութեամբ կը պսակուին իր ջանքերը Ռումէլի երկաթուղագծի շինութեան գործին համար: «Վսեմ. Տաւուս Փաշային գործունեայ բանախօսութեամբը», կը տեղեկագրէ Իզմիրի Արշալոյս Արարատեան<sup>120</sup>, «Վիեննայի մէջ ընկերութիւն մի հաստատուեցաւ Ռումէլի երկաթուղին շինելու համար»: Յետոյ նոյն թերթը կ'ամբողջացնէ իր խօսքը. «Կը հաւաստեն թէ հրապարակական շինուածոց տեսուչ Վսեմ. Տաւուս Փաշան յաջողեր է համաձայնութիւն մի հաստատելու ի մէջ գլխաւոր սեղանաւորաց Փարիզի եւ Վիեննայի ի մասին շինութեան երկաթուղոյն Անդրբանուպոլսոյ<sup>121</sup>»: Պարիսի

116 Մէնմ. Հավատիս, 1868, Թ. 758:  
117 Անդ. Թ. 779:  
118 Արշ. Արարատեան, 1868, Թ. 842:  
119 Անդ. Թ. 845 եւ 846:  
120 Անդ. 1869, Թ. 850:  
121 Անդ. Թ. 854. Թ. 855ի մէջ կ'աւելցնէ թէ Տաւուս Փաշայի այդ ձեռնարկութիւնը կատարելագոյն յաջողութիւն է:

111 Մէնմ. Հավատիս, անդ:  
112 Անդ. Թ. 753:  
113 Հմմտ. Մէնմ. Հավատիս, 1869, Թ. 777 եւ Արշ. Արարատեան, 1868, Թ. 834:  
114 Մէնմ. Հավատիս, անդ. Թ. 777:  
115 Անդ. Թ. 834:

եւ Վիեննայի մէջ Ռումէլի երկաթուղեաց շինութեան համար Տաւուս Փաշայի ըրած դաշնադրութիւնները Բ. Գրան կողմէ հասուն ընտելութեան վերջ՝ կ'ընդունուին (Արշալոյս Արարատեան, Թ. 857. Մէնմ. Հավատիս, Թ. 794): Կը մնար կայսերական վաւերացումը, որ չուշանար:

Ըստ Արշալոյս Արարատեանի<sup>122</sup> «Օղոստախա Սուլթանը իւր կայսերական հաւանութեամբը վաւերացոյց Ռումէլի երկաթուղեաց շինութեան դաշնադրութիւնը, զոր Վսեմ. Տաւուս Փաշան ըրած էր ի Փարիզ եւ ի Վիեննա, ուստի հաւանականաբար շատ չանցած այս կարեւոր շինութիւնը պիտի սկսի, որուն քաղաքական եւ վաճառականական օգուտները յայտնի են ամէնուն»:

Շինութեան սկսումը կ'ուշանայ յանձնառու եւ դաշնադիր ընկերութեանց անվճար կանութեան պատճառաւ: Խօսք կ'ըլլայ դաշնադրութեան խղճմի եւ ուրիշ ընկերութեան մը յանձնառութեան եւ Վիեննայի մէջ նոր բանակցութեան սկսելուն<sup>123</sup>, որոնք ի վերջոյ կը յանդին փոխադարձ համաձայնութեան մը, որով 1870 Յունիս 15ին (ն. տ.) կրնար Զմիւռնիոյ Արշալոյսը «Ուրախ սրտիւ ծանուցանել թէ Ռումէլի երկաթուղեաց շինութեան աշխատութիւնները սկսան»<sup>124</sup>:

Վսեմ. Տաւուս Փաշա յաջողութեամբ գլուխ հանելով Ռումէլի երկաթուղիներու շինութեանց նման բարդ խնդիրը՝ 1869 Սեպտեմբերի սկիզբը (նոր տոմար) կը վերադառնայ Պոլիս<sup>125</sup>:

Հարկ չկայ բացատրելու թէ ի՞նչքան մեծ ձեռնարկ մըն էր Ռումէլի երկաթուղիներու շինութիւնը այնպիսի առեւ մը՝ երբ դիւզի գիւղ, քաղաք քաղաք ու երկրէ երկիր տակաւին եզան կամ ձիու կառքերով միայն տեղի կ'ունենար փոխադրութիւնը եւ շատ տեղեր ճամբաներ խոկոյութիւն չունէին<sup>126</sup>: Չենք խօսիր բարոյական ու նիւթական անյաղթելի խոչընդոտներու վրայ, որոնց յաղթել պէտք էր. հին մտայնութիւններ, որոնք փոփոխել ու արդիականացնել անհրաժեշտ էր:

Հարկ է շեշտել սակայն կէտ մը, որ Վսեմ. Կարապետ Արթին Փաշա Տաւուսեանի

122 Անդ. Թ. 858 Յունիս 3 (նոր տոմար):  
123 Հմմտ. Մէնմուսայը Հավատիս, 1869, Թ. 810, 817 եւն:  
124 Արշ. Արարատեան, 1870, Թ. 885:  
125 Անդ. Թ. 865. «Վսեմ. Տաւուս Փաշան վերադարձաւ Եւրոպայէն՝ յաջողութեամբ ընկնելով Ռումէլի երկաթուղեաց շինութեան խնդիրը»:  
126 Հմմտ. Մէնմ. Հավատիս, Թ. 794:

այս ձեռք բերած արդիւնքին մեծութիւնը կը բարձրացնէ. — Ռումէլի երկաթուղիներու շինութեան յանձնառութիւնը Եւրոպայինընդու քով ապահովելու համար՝ հարկ էր Եւրոպայի ներկայացնել Օսմանցիներու վրտասէլիութիւնն ու պատուաւորութիւնը: Ու ստիկա ըրաւ Տաւուս Փաշա՝ շահելով համակրութիւն մը նախ իր անձին եւ յետոյ իր ձեռնարկած գործին շուրջ: Չափազանցութիւն չէ, եթէ ըսենք որ իր անուան հոշակն արդէն երաշխիք մըն էր իր ձեռնարկած գործին յաջողութեան համար:

Ռումէլի երկաթուղիին քաղաքական ու տնտեսական նշանակութիւնը անգնահատելի է: Ասիան ու Մերձաւոր Արեւելքը Եւրոպայի հետ կը կապէր ամենակարճ ճամբով՝ մինչ առաջ ստիպուած էին ծովու երկարատեւ ճամբորդութեամբ ընել շատ բան:

Միայն Ռումէլի երկաթուղեաց շինութեան մէջ իր կատարած դերը բաւական է Կարապետ Արթին Տաւուսեան Փաշայի անունը պատմութեան մէջ անմահացնելու համար: —

Պոլիս վերադարձին՝ կարող էր Տաւուս Փաշա այլեւս քիչ մը հանդստանալ ու վայելել իր աշխատութեանց պտուղը: Բայց բախտը չունեցաւ ատոր: Հիւանդութիւն մը, որ դուցէ շատոնց իր դոյութիւնը զգացուցած էր, բայց պետական ծանր աշխատութեանց ու տքնութեանց մէջ անտես առնուած՝ այժմ կը պարտադէր իր դաժան դոյութիւնը: 1840—1870 երկար շրջան մը առանց գուլ ու դադար անելու՝ մէկ պաշտօնէ ուրիշ պաշտօն մը, մէկ պարտականութենէ միշտ պաշտօն մը, մէկ պարտականութենէ միշտ պաշտօն մը, ստանձնած՝ գործած էր Օսմանեան Պետութեան վարչական շատ մը ասպարէզներու մէջ: Եւ հա՛ս վերջին — Ռումէլի երկաթուղեաց շինութեան բազմաբարդ խնդիրը լուծելու համար ամիսներէ ի վեր շարունակական յոգնեցուցիչ ճամբորդութիւններով մեծապէս տուժած էր իր առողջութիւնը:

Ժամանակակից պոլսական թերթ մը 1870 Փետրուար 19 թուականով կը գրէ. «Հանրօգուտ շինութեանց նախարար Վսեմ. Տաւուս Փաշայի առողջութիւնը խանգարուած ըլլալով՝ քանի մը անուանի մասնապէս բժիշկներ խորհրդակցութիւն կատարելով հարկ տեսած են որ նա ժամանակաւորապէս գործէ հեռի գտնուելով՝ հանքային ջրերու զարմանում ընէ: Կ'ըսուի որ Վսեմ. Նախարարը

դարձան հանքային ջուրեր պիտի երթայ<sup>127</sup>»:  
Նոյն տարուց Ապրիլ ամսոյն, Կայսեր կողմէ մտերիմ ընդունելութեան մը պահուն՝ իր պաշտօնի գործերու մասին տեղեկութիւն կու տայ, որոնք Կայսեր ուրախութիւն կը պատճառեն<sup>128</sup>: Հաւանական է որ Կայսեր հաճութիւնը ընդունած ըլլայ դարձանումի համար Եւրոպա մեկնելու: Արդեամբք ալ Վիեննա կը մեկնի:

Մէնուայը Հավատիսի համեմատ՝ Հանրօգուտ շինութեանց նախարար Տաւուտ Փաշա Վիեննա հասնելուն՝ Աւստրիոյ Կայսեր կողմէ շքեղ ընդունելութիւն կը գտնէ եւ Շէօնրունի պալատին մէջ սարքուած հանդիսութեան մը խնջոյքին կը հրաւիրուի: Լսենք Մէնուայի խօսքերը բառացի. «Նաֆիա նազըրը տէվլէթլու Տավութ բաշա հազրէթլըրի վիէննայա միւլասէլէթինտէ, Աւսթրիա իմբէրաթօրու թարաֆընտան հիւսնիւ դապուլիյէթ պուրմուշ վէ Շէնպրիւն սարայընտա քէշիտէ օլունան զիյաֆէթտէ հազըր պուրունմուշ տուր<sup>129</sup>»:

Թէ ո՛ր ջերմուկները գացած է՝ տեղեկութիւն մը չենք գտներ: Հաւանական է որ Աւստրիոյ կամ Գերմանիոյ բաղնիքները գացած ըլլայ: Պոլսոյ Փունը<sup>130</sup> Տաւուտեանի Պոլիս վերադարձը լոկ յիշելով՝ կը գրէ. «Հասարակային շինուածոց պաշտօնեայ Տաւուտ Փաշան՝ որ ժամանակէ մը հետէ Եւրոպա կգտնուէր, երեքարթի օրը մայրաքաղաքս դարձաւ»: Իզմիրի Արշալոյս Արարատեանի<sup>131</sup> ծանօթ է թէ Տաւուտեան Եւրոպայի հանքային ջուրերը գացած է, բայց թէ ո՛ւր՝ չի հաղորդեր: Սա կը գրէ Սեպտեմբեր 12 թուականով. «Հրապարակական շինուածոց պաշտօնեայ Վսեմ. հայկազուն Տաւութ Փաշան անցեալ շաբթու հասաւ ի Կ. Պոլիս Եւրոպայէն վերադառնալով, ուր գացած էր հանքային բաղնիքը մտնելու»:

Ատկէ վերջ զինքը կը գտնենք Հանրօգուտ շինութեանց նախարարական իր պաշտօնին գլուխ<sup>132</sup>: Սակայն իր առողջութիւնը անգամ մը խանգարուած՝ զինքը այլեւս հանգիստ չի թողուր: Այնպէս որ 1871 Մարտին հարկ

կ'ըլլայ զինքը առժամանակեայ կերպով ազատ կացուցանել իր պաշտօնի գործերէն, զորոնք Գապուլի Փաշային կը յանձնեն<sup>133</sup>, իսկ ինքը իր խանգարուած առողջութիւնը դարձանելու համար այս անգամ դէպ ի Բիոս (Սազըզ) կղզին կը դիմէ<sup>134</sup>: Մասիս կը գրէ. «Բիոսէն հեռազիր մը կը ծանուցանէ թէ հասարակային շինութեանց վերատեսուչ (նախարար) Վսեմ. Տաւութ Փաշան՝ որ իր առողջութիւնը կազդուրելու համար ճամբորդութեան ելած է՝ յիշեալ կղզին հասեր է»:

Թէ Բիոսի մէջ եւ անկէ յետոյ Տաւուտ Փաշայի առողջական վիճակը ի՛նչ ընթացք ունեցած է՝ մեզ անծանօթ կը մնայ, բայց 1871 Յունիս 8 թուականաւ Պոլսոյ Մասիս կը գրէ որ. «Կայսերական հրամանաւ՝ ելեւմտից պաշտօնեայ Վսեմ. Մէնուայ Րիւշտի Փաշան Հասարակային շինութեանց պաշտօնեայ անուանեցաւ փոխանակ Տավուտ Փաշայի<sup>135</sup>»: Հաւանական է որ երկար ատեն դարձանումի եւ հանգիստի պէտք ունենալուն՝ Տաւուտ Փաշա հրաժարած ըլլայ իր նախարարական պաշտօնէն: Ամէն պարագայի Բ. Դուռը նկատի առած է այս պարագան եւ 10.000 զրուշ ամսաթուղակ կապելով ապահոված անոր հանդիստը: Ասիկա կ'իմանանք հայ թերթի մը պատահական մէկ ծանուցումէն, ուր կ'ըսուի. «Սապըզ Նաֆիա Նազըրը տէվլէթլու Տավուտ Բաշա հազրէթլըրինն օն պին դուրուշ մասաշլա միւլթէգայիտ օլտուգլարը զազէթալարտա մուհարըրէր տիր<sup>136</sup>»:

Կը թուի թէ Բիոս կղզին երկար չէ մնացած Վսեմ. Տաւուտեան: Անկէ անցած է Եւրոպա: Թէ ուղղակի ո՛ւր գացած է՝ յայտնի չէ: Եթէ հաւատք ընծայենք հայ թերթի մը անորոշ մէկ տեղեկատուութեան՝ պէտք է ընդունել թէ ան անցած է հիւսիսային Իտալիա, Պո գետի կողմերը, ուր իբր թէ ան բնակարան ունեցած է եւ Պո գետի յորդումէն վտանգի ենթարկուած...: Տանք ամբողջ տեղիքը: Փունը 1872 Յունիս 14ին (հին տոմար) կը գրէ<sup>137</sup>. «Հուսմէն դրուածին նայելով Իտալիոյ մէջ Բօ գետոյն յորդելուն եւ շրջակայ գիւղօրէքն ու դաշտօրայքն

հեղեղելուն եւ շատ տուներ աւերելուն պատճառաւ, 40 միլիոն ֆրանկի նիւթական փնաս եղեր է: Երբեմն Լիրանանու կառավարչութիւն եւ հասարակային շինուածոց պաշտօնէն եւ Տաւուտ ազայի... բնակարան ալ Իտալիոյ նոյն կողմերն լինելով՝ հեղեղներն գիշեր ատեն յանկարծ կոխեր են եւ մեծ դժուարութեամբ ազատեր է»:

Տաւուտ Փաշայի Իտալիոյ Բօ գետի կողմերը երթալու մասին ուրիշ կողմէ տեղեկութիւն չունինք: 1872ի ատենները այդ կողմերը գտնուելուն վրայ կը տարակուսինք: Չենք կարծեր թէ իր խանգարուած առողջութիւնը դարձանելու համար Իտալիոյ այդ կողմերը գիմած ըլլայ: Նկատի առնելով որ Փունը նախապէս<sup>138</sup> տեղեկացուցած էր թէ Գազղիոյ մէջ ալ յորդ անձրեւներ տեղացած եւ մեծ փնասներ պատճառած են՝ կ'ուզենք փունըի տեղեկատուութեան մէջ սրբազրութիւն մ'ընել. յորդող Բօ գետը փոխանակ Իտալիոյ՝ Փրանսայի մէջ կ'ուզենք գնել: Արդարեւ Փրանսայի հարաւարեւմտեան կողմը կայ Pau գաւառը եւ համանուն Pau կամ Gave de Pau գետը, որ Biarritzէն ոչ շատ հեռու Adour գետին մէջ կը թափի: Արդ ֆրանսերէն La Grande Encyclopédieի<sup>139</sup> մէջ Antonin Debidour կը գրէ թէ Տաւուտ Փաշա Փրանսա եկած էր իր խանգարուած առողջութիւնը դարձանելու եւ թէ 1873ին Biarritz կը վախճանի: Կը կարծենք թէ տրամաբանական է ընդունել թէ Biarritzի մօտ եղող Pauի կողմերն եղած ըլլալու է իր բնակարանն ալ:

Վսեմ. Տաւուտ Փաշայի Biarritz գալուն պատճառն անշուշտ այն էր որ այս քաղաքը անուանի էր իր բաղնիքներովը: Թէ ե՛րբ եկած է եւ ո՛րքան մնացած՝ չենք գիտեր: Ամէն պարագայի հող ո՛չ առողջութիւն գտած է ոչ ալ հանգստացած: Չարձանալի, չըսելու համար անհաւատալի լուր մը կը կարդանք Կ. Պոլսոյ «Մասիս»ի ներքին լուրերու մէջ: Թերթը կը գրէ 1872, 13 Մայիս թուականով (անդ՝ Թ. 1237). «Հապայիք լրագիրը կը ծանուցանէ թէ երբեմն Լիրանանու կուսակալ եւ ետքն ալ Հասարակային շինութեանց վերատեսուչ Տավութ Փաշան, որ ժամանակէ մ'ի վեր Եւրոպա կը գտնուի, քանի մի հարցուելիք խնդրոց համար Կ. Պոլիս հրաւիրուեցաւ, բայց մտիկ չըբաւ: Ասոր

վրայ Բ. Դուռն ալ աստիճանէն ձգեց զայն, եւ ամսականն ալ դադարեցուց» (հմմտ. նաեւ Փունը, 1872, Թ. 722):

Ըստ վերոյիշեալ La Grande Encyclopédieի՝ 1873 Նոյեմբեր 9ին կը կնքէ իր մահկանացուն: Մանրամասնութիւններ կը պակսին այդ մասին: Հաւանօրէն մարմինը Բիարրից կը թաղուի:

Տաւուտ Փաշայի մահուան պարագաներու մասին ճշգրտ մ'ընելու փափագով՝ տարուոյս Փետրուար 9ին նամակ մը գրեցինք Biarritzի Գաղաքապետութեան, խնդրելով որ հաճի ճշգրէլ Տաւուտ Փաշայի 1. մահուան թուականը եւ 2. ո՛ւր թաղուած ըլլալը: Գաղաքապետութիւնը հաճեցաւ պատասխանել 17 Փետրուար նամակով մը, որուն մէջ կը գրէ. «... պատիւ ունիմ ճշգրելու որ Տաւուտ Փաշա վախճանած է Բիարրից, 4 Նոյեմբեր 1873ին: Իսկ իր թաղումի մասին՝ Բիարրիցի Սուրբ Մարտինոս եկեղեցւոյ քով քննութիւններ կատարեցինք, վասն զի այդ դարուն այս եկեղեցին միակ աւանդապահն էր գերեզմանատան դիւաններուն, եւ սակայն անկարելի եղաւ այդ գերեզմանին հետքը գտնել»:

Ասով գոնէ ստուգուած կ'ըլլայ թէ Վսեմ. Կարապետ Արթին Տաւուտեան Փրանսայի Biarritz քաղաքը մեռած է 1873 Նոյեմբեր 4ին եւ ոչ թէ 9ին ինչպէս Debidour կը գրէ: Իսկ գերեզմանը՝ հաւանականօրէն անշուք անշիբիմ եղած ըլլալուն համար՝ ժամանակի ընթացքին խառնուած կորսուած է, եթէ ուրիշ տեղ փոխադրուած չէ:

Տաւուտ Փաշայի կենսագրական դժերուն մէջ ոչ մէկ ակնարկութիւն գտած ենք իր ամուսնացած ըլլալու մասին: Կը կարծենք թէ ամուրի մնացած է: Ամուրի էր նաեւ Դկա. Յակոբ Տաւուտ (Հանդէս Ամսօրեայ, 1898, էջ 78):

Տաւուտեան գերդաստանի շիրիմները, որոնք կարեւոր լոյս կրնային սփռել այս անուանի տղճմի պատմութեան վրայ՝ դժբախտարար անհետացած կ'երեւան: Կ. Պոլսոյ կաթ. Հայոց շիրիմներու յիշատակարաններու հնագոյն ցանկին մէջ միայն հետեւեալին կը հանդիպինք<sup>140</sup>.

127 Մէնուայը Հավատիս, Թ. 836:  
128 Անդ՝ Թ. 844:  
129 Անդ՝ 1870 Յունիս, Թ. 852:  
130 1870 Օգոստ. 27, Թ. 630:  
131 1870, Թ. 892:  
132 Մասիս, 1871, Թ. 1042: Մէնու. Հավատիս (1871, Թ. 896 Փետր.) կը գրէ որ Հանրօգուտ շինութեանց նախարար ատենէ մը ի վեր իստակցութեան նիւթ եղած հիւանդութիւնէն կազդուրուած ըլլալով՝ պիտի կարենայ իր պաշտօնին գործերը շարունակել»:

133 Մասիս, Թ. 1061:  
134 Անդ: Մէնու. Հավատիս, Թ. 898 եւ 899:  
135 Թ. 1061:  
136 Մէնու. Հավատիս, 1871, Թ. 930, Յունիս 7:  
137 Թ. 16. — Մէնու. Հավատիս (1872, Թ. 1081) իտալիայէն 9 Յունիս հեռագիր մը կը հրատարակէ այդ մասին. «Բօ չայը ճօշուպ, 99 քիլօմէթրօ վիւսաթտա օլան արաղի խարապ օլմուշ վէ 22.000 քիշի խանէսիգ գալմըշ տըր»:

138 Փունը, 1872, Թ. 7 եւ 14:  
139 Tome XIII, էջ 919:

140 Հ. Յակոբ Մ. վ. Քոստան, Գերեզմանատան Կաթողիկէ Հայոց Կ. Պոլսոյ, Վիեննա 1931, էջ 37: Դր. Յակոբ Տաւուտի գերեզմանը Շիրլի է, բայց անոնց դամբանի (Հ. Ա., 1898, էջ 78):

Ք.

Տավուտ գատե Անտոն 141  
Աղանքն ալի Մարիամ  
Տուտունքն մեզարքն  
Նըշան դաշը տըր հէր քիմ  
Զիարէք էտէր իսէ բահմէք  
Իլէ էատ իլլէյէ  
Թարիլս միլատի հազ  
րէք իսա  
1817.

Վիեննայի մեր թանգարանի լուսանկարներու հաւաքածոյին մէջ կը գտնուին Տաւուտ Փաշան ներկայացնող երեք լուսանկարներ. մին Պարիսէն Maison Levitzkyի արտադրութիւն, իսկ երկուքը Կ. Պոլիս Արդուլլահեան Եղբարց լուսանկարչատունէն: Առաջինը կը ներկայացնէ զինքը եւրոպական տարազով, գլուխը ֆէս. հաւանորէն քաշուած 1860ին: Միւս երկուքին մէջ Վսեմ. Կարապետ Արթին Տաւուտեան կը ներկայանայ իրր Կուսակալ Լիբանանի, Փաշայի յատուկ շքեղ հանդերձներու մէջ, կուրծքը զարդարուած բարձր պատուանշաններով, բարձրաձայն լայն գոտիէն կախ ժապաւինազարդ կեռ երկայն սուրը: Այս լուսանկարները ստնուած են 1861էն վերջ:

\*\*

Վսեմապատիւ Կարապետ Ա. Տաւուտեան Փաշայի հանրային գործունէութեան պատկերը կիսաւարտ մնացած պիտի ըլլար՝ եթէ չաւելցնէինք անոր ազգային գործունէութեան բաժինը: Կը խոստովանինք որ այս մասին շատ բան չունինք ըսելիք՝ անձանօթ մնացած ըլլալով անոր գործունէութեան այս կարեւոր բաժինը, բայց այն՝ ինչ որ պիտի ըսենք՝ կը կարծենք թէ անհրաժեշտ է:

1840—1870 տարիներուն, ուր կ'ամփոփուի գլխաւորաբար Կարապետ Արթին Տաւուտեանի հանրային գործունէութիւնը՝ Կաթողիկէ Հայոց Պատմութեան մէջ զժրախտ շրջան մըն է հասունեան եւ հակահասունեան հակամարտութեանց պատճառաւ: Անմասն մնալ օրուան հրատապ խնդիրներէն, գրեթէ անհնարին էր: Մանաւանդ որ կար մաս մը լրջախոհ եւ պատուախնդիր Հայերու, որոնք կը ջանային ամէն գնով հաշտութեան եզրներ գտնել եւ վերջ տալ անպատուարեր հակա-

141 Աւետիս Պէրպէրեանի (Պատմութիւն, էջ 82) յիշած Անտոն Տավուտեանն է:

մարտութեանց: Տաւուտեանի ստացած կըրթութիւնը եւ թուրք Պետութեան մէջ անոր աստիճանաբար միջոտ աւելի բարձր ու պատուարեր պաշտօններու վերելակովը՝ ապահով գրաւական են մեզ համոզելու թէ նա եւս բարձր մնացած էր օրուան ճղճիմ հաշիւներէ ու կողմնակցական շարժումներէ:

1852 Յունիս 17ին կը մասնակցի երկու եզրներու հաշտութեան ժողովի մը, ուր զինքը կ'ընտրեն 24 հոգիէ բաղկացած Յանձնաժողովի անդամ<sup>142</sup>: Նոյն տարուոյ Նոյեմբերին Պատրիարքի ընտրութեան ժամանակ քարտուղարի պաշտօն կը վարէ<sup>143</sup>: Դժբախտաբար միութիւնը տեղի չ'ունենար եւ երկակողմանի անհաշտ զգածումները կը շարունակեն խոով պահել Հայ Կաթողիկէ փոքրիկ հասարակութիւնը:

Կարապետ Արթին Տաւուտեան 1861ին իրրեւ ընդհանուր կառավարիչ Լիբանանի՝ կը մեկնի իր պաշտօնատեղին: Իր բարձրագույն վիճակը արդէք չ'ըլլար սակայն Ազգին ցաւերով ու հոգերով ալ զրաղելու: 1863ին մասնաւոր այցելութիւն մը կու տայ իրեն Լիբանանի մէջ Ս. Աթոռի Նուիրակը՝ Monseigneur Valerga, որուն կը փոխադարձէ, որմէ վերջ այցելութեան կ'երթայ Հայ Կաթ. Կաթողիկոս Գրիգոր Պետրոս Ը.ին, ինչպէս նաեւ Անտոնեան վանքը, ուր կը զիշերէ: Հայ թերթը կ'ըսէ որ շատ գոհ մնացին իրեն հետ ունեցած այս տեսակցութենէն<sup>144</sup>: Տարակոյս չունինք որ Վսեմ. Կարապետ Փաշա Տաւուտեանի բարձր զիրքն ու խոհական վարմունքը նպաստած ըլլան Հայ Կաթ. հասարակութիւնը տառապեցնող խնդիրներու բարեօք լուծումին համար:

Միշտ սերտ յարաբերութիւն կը պահէր Հայ վերին մարմիններու հետ եւ մօտէն կը հետաքրքրուէր այն ամէն բանով՝ որ հոյակապ էր: 1862ին Իզմիրի Արշալոյսի գրուած թղթակցութիւն մը մասամբ կը պատկերացնէ զայդ. «Բարձրապատիւ եւ վսեմաշուք հայազգի Տաւուտ Փաշան իւր խոհեմ ընթացքովը եւ ճարտար կառավարութեամբը ինքզինքը ամէնուն սիրելի եւ յարգի ընծայած է. մասնաւորապէս Լիբանանու Հայոց ամենապատիւ Կաթողիկոսին համակրութիւնը ըստ արժանւոյն կը վայելէ: Յիշեալ բարձրապա-

142 Ասկերեան, Հասունեան քաղաքականութիւն, էջ 201:  
143 Անդ, էջ 237:  
144 Մէնս. Հավատիս, 1863, թ. 513: Հմմտ. Ասկերեան, անդ՝ էջ 477 Յակոբ Յ. Տաւուտի մասին ըսուածները:

տիւ պաշտօնատարը կաթողիկոսարանը անգամ մի այցելութեան երթալով՝ խիստ մեծ համարմունք ունեցաւ միարանութեանը վերայ, վասն զի տեսաւ եւ իմացաւ որ բաց ի ուրիշ բարեկարգութեանց, որովք կը փայլէ նոյն միարանութիւնը, ազգային սեփական իրաւունքները... թէ՛ աթոռը եւ թէ՛ անոր վիճակներուն մէջ անարատ պահուած են<sup>145</sup>:

Տարիներ վերջ երբ Վսեմ. Տաւուտեան Օսմանեան Պետութեան դահլիճին անդամ կ'ըլլայ՝ հայ թերթի մը համեմատ՝ Բ. Դուռը ուզած է օգտուիլ իր բարձր ու ազդեցիկ զիրքէն՝ լուծելու համար Հայ Կաթողիկէներու վիճը: Պոլսոյ Մասիսի մէջ կը կարդանք այս մասին. «Կ'ըսուի թէ Բ. Դուռը հասարակային շինութեանց պաշտօնեայ (նախարար) Վսեմ. Տաւուտ Փաշային յանձնէր է Կաթողիկէ Հայոց վիճը քննել եւ երկու կողմն իրարու հետ համաձայնեցնելու միջոց մը գտնել<sup>146</sup>»: Թէ ստուղիւ Բ. Դուռը Վսեմ. Տաւուտեանի յանձնած է այսպիսի կարեւոր խնդրի մը լուծումը եւ նա ընդունած է ինչ քայլ առնած է՝ զժրախտաբար չկրցանք ստուղիլ: Գիտենք որ նոյն այդ 1871 տարուոյն նա հիւանդ է եւ դարմանումի կարօտ<sup>147</sup>:

\*

Վսեմ. Կարապետ Տաւուտեանի ազգային գործունէութեան մէկ կարեւոր էջը կը կազմէ նաեւ Հայ կրթական մարզին դարձուցած իր մասնաւոր ուշադրութիւնը:

Տաւուտեան զգալով անհրաժեշտ պէտքը մեր Ազգին ուսման ու կրթութեան մակարդակը բարձրացնելու՝ երկար ատեն խորհած ու քննած է այն բոլոր միջոցները, որոնցմով կարելի է հայ դպրոցներու ուսման ու կրթութեան ծրարիւնները լաւ հիմնուելու վրայ դնել: Նկատի ունեցած է Փրանսական, բայց մանաւանդ գերմանական ուղղութիւնները: Իր մտածմունքներուն գաղափարակից ունեցած է Ստեփան Վ. Ազարեան, ապագայ Հայ Կաթ. Կաթողիկոս-Պատրիարքը: Երկուքը միասին մանրամասն ուսումնասիրելէ եւ երկար խորհրդակցելէ վերջ՝ կը կազմեն ուսման որոշ ծրարի մը, զոր ապա կը ներկայացնեն նոյն ժամանակի Կ. Պոլսոյ Կաթ. Հայոց Նախագահ Գեր. Անտոն Հասունեանին: Հասունեան 1860 Օգոստոս 10/22ին

145 Արշալոյս Արարատեան, թ. 670:  
146 Մասիս, 1871, թ. 1042:  
147 Անդ, թ. 1061: Մէնս. Հավատիս, թ. 899:

հինգ եկեղեցականներէ եւ հինգ աշխարհականներէ կազմուած յատուկ ժողով մը կը դուժարէ, որուն ներկայ է, բնականաբար, Կարապետ Տաւուտեան: Խօսքը տանք ժողովքիս մասնակցողի մը — Հ. Պողոս Վ. Պոյնուէյրեանի<sup>148</sup> — որ կը գրէ. Գեր Հասունեան «Այս ժողովոյն մէջ ժողովականաց մտաց եւ բաղձանաց յարմար ճառ մը խօսեցաւ, որով Ազգայնոց ընդհանուր յառաջադիմութեան ըզձին եւ օգտակար դիտաւորութեանը գործիք ըլլալու վախճանաւ — Ազգային կրթութեան ժողով — մը հաստատեց տասն անդամներէն բաղկացեալ, հինգը եկեղեցական եւ միւս հինգը աշխարհականներէն, զորոնք որ հրաւիրեր էր հոն»:

«Ազգային կրթութեան ժողով»ին էական վախճանն էր Հայ Կաթ. հասարակութեան ազգային եւ կրօնական կրթութեան հոգը ամբողջ Օսմանեան Պետութեան մէջ՝ դպրոցներ բանալով, ընտիր ուսուցիչներ հասցնելով եւ դպրոցներու վարչութիւններու վրայ հսկելով<sup>149</sup>:

Գեր. Հասունեան իր բացման ճառին մէջ յորդորելով որ ամէնքը իրենց կրցածին չափ նպաստեն այս ազգօգուտ գործին՝ մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնէ Ազարեան Վ.ին եւ Կարապետ Տաւուտեանին: Իր խօսքերն ասոնք են. «Առանձին կերպով ալ երախտագիտութիւնս կը յայտնեմ Յարգոյապատիւ Ազարեան Ստեփան վարդապետին ու Մեծապատիւ Կարապետ Արթին Տավուտ Էփէմտիին, որոնք շատուց իրենց մէջ ազգի մը խորհելէն ու կշռելէն ետքը՝ թէ ինչպէս ազգային ուսումն ու կրթութիւնը հաստատուն եւ ընդարձակ հիման մը վրայ կրնայ յառաջադիմ ըլլալ, միանգամայն ամէնէն աւելի գործակից եղան աւ մեր մէջը նոր հաստատուած յաջող միութիւնը յառաջ բերելու<sup>150</sup>:

Ճառէն վերջ ժողովականներն ալ իրենց երախտագիտութիւնը կը յայտնեն Տաւուտեանին<sup>151</sup>: Հինգ կէտերէ բաղկացած Ազգային ժողովին յայտադրեր ամէնքը կը ռոտորազրեն<sup>152</sup>: Ժողովքի սահմանադրութիւն-

148 Ասկերեան Յ. (Հ. Պ. Վ. Պոյնուէյրեան), Հասունեան քաղաքականութիւն, էջ 389—390:  
149 Ժողով ազգ. կրթութեան, Վիեննա 1860, էջ 9—10: Ասկերեան, անդ՝ էջ 390: Մէնս. Հավատիս, 1861, թ. 387:  
150 Ժողով ազգ. կրթութեան, էջ 6—7: Մէնս. Հավատիս, անդ:  
151 Ժողով ազգ. կրթութեան, էջ 8: Մէնս. Հավատիս, անդ.  
152 Ժողով ազգ. կրթութեան, էջ 11: Մէնս. Հավատիս, անդ. Տաւուտեան իր անունը ստորագրած է՝ Կարապետ Արթին Տաւուտ:

ները կամ կանոնները յօրինելու համար չորս հոգի է կազմուած յանձնախումբ մը կ'ընտրեն, որուն մէջն են Կարապետ Տաւուտեան եւ Յակոբ Տաւուտեան: Սահմանադրութիւնները 24 Յօդուած կը բովանդակեն եւ հրատարակուած են «Ժողով ազգ. կրթութեան» գրքոյկին<sup>153</sup> եւ Մէծմուսյը Հավատարի<sup>154</sup> մէջ:

Ժողովքի կնիքը ազգային խորհրդանիշ մ'է, որ կը ներկայացնէ Ոգի մը՝ գլուխը բերդով մը, որ Վաղարշապատ քաղաքը կը նշանակէ, այն քաղաքը, որ Հայ Ազգային կրթութեան ու քաղաքականութեան վառարանն եղած է: Խուրճը, որ նոյն Ոգին ձախ ձեռքը բռնած է՝ Միութիւն կ'ակնարկէ: Երասխ գետը՝ որուն մէջ թափուող վտակ մը նոյն քաղքին առջեւէն կ'անցնի՝ Հայաստանի նշանակ է. այս գետին կամուրջը ջուրերուն յորդութենէն քանդուած է Վիրգիլիոսի խօսքին համեմատ — Araxes pontem indignans — (կամուրջի չհանդուրժող երասխ) . Ջահը, զոր աջ ձեռքով Ոգին բռնած է՝ Քրիստոնէութեան լոյսը կ'ակնարկէ, զոր Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստան տարածեց ու այս ջահով լուսաւորուած Մեսրոպեան տախտակը Ազգային կրթութեան ակնարկութիւն է<sup>155</sup>:

Գ.

ԳՐԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ

Վսեմ. Կարապետ Արթին Տաւուտեան տակաւին չընդունած «Փաշա», «Միւշիք», «Լիրանանի ընդհանուր կառավարիչ» եւ «Հանրօգուտ Երեսօթեանց Նախարար» տիտղոսները՝ հանած էր գիտական աշխարհի մէջ հոչակ մը<sup>156</sup>, որ բաւական էր արդէն զինքը մեծ եւ անուանի մարդկան կարգը դասելու համար: Այդ հոչակը կը պարտէր նա անխոնջ աշխատանքներու պտուղ իր երկհատոր գրքին, որ սա խորագիրը կը կրէ.

Histoire de la Legislation des anciens Germains. 2 Volumes. Wisigoths, Baiuvariens, Alamanns, Burgundiens, Francs-Sa-

<sup>153</sup> Անդ՝ էջ 14—20:  
<sup>154</sup> Թ. 388:  
<sup>155</sup> Ժողով. ազգ. կրթութեան, էջ 20 ծանօթ.: Մէծմ. Հավատիս, անդ:  
<sup>156</sup> Վիեննայի Presse թերթը 1854ին հետադարձաբար մը տուած ատեն կը գրէր. «...սա ժողովքին անդամներն են Տէրվիչ Փաշա... ամենուրեք ծանօթ գիտնական Տավութեան Հայագրի...» (Եւրոպա, 1854, թ. 33):

liens, Francs-Ripuaires, Langobards, Thüringiens, Frisons, Saxons, Anglo-Saxons Berlin 1845. G. Reimer, Libraire-éditeur

Այս գուտ գիտական գործը, որ CVIII + 1460 էջեր գրուած է՝ հեղինակն ուրիշ է գերմանացի ծանօթ ազգագրագետ գիտնական Գրիմ Եղբայրներէն Jacob Grimmի, որուն ձօնած իր խօսքերէն կը տեսնուի թէ Կարապետ Արթին Տաւուտեան 1840էն առաջ Կ. Պոլիս ծանօթացած է Յակոբ Գրիմի եւ անկէ օգտակար ներշնչումներ ընդունած իր այս հոյակապ գործն արտագրելու համար:

Ինչպէս հեղինակը իր յառաջարանին մէջ (էջ XI) կը պարզէ՝ այս գիրքը գրելու նպատակն եղած է «տալ պատկեր մը գոյն գերմանական օրէնսդրութեան եւ գերմանական ժողովուրդներու նախնական բարբերուն»:

«Օրէնսդրութիւնը, կ'ըսէ, հաւատարմութիւնն է ժողովուրդներու կեանքին եւ անոնց կրօնական ու քաղաքական դադարները ուղղութեան» (էջ VIII): «Ուսումնասիրել օրէնքները՝ կը նշանակէ ուսումնասիրել պատմական իրողութիւններու ծագումն ու պատճառները. իսկ անոնց մէջ խորանալ կը նշանակէ ինքզինքը մարդել ուղղադատութիւնը կ'ըսէր: Գրքի մարդկային տարողութիւնը որոնք քաղաքակրթութեան վրայ հակառակ կամ նպաստաւոր ազդեցութիւն կը բանեցնեն. ուսկից կը հետեւի յստակօրէն թիւ օրէնսդրութեան ուսումնասիրութիւնը անհրաժեշտ է պատմութեան համար»:

Յառաջագիր իր այս վախճանին հասնելու համար Տաւուտեան ջանացած է օգտուիլ որքան կարելի է գուտ գերմանական եւ նուազ հռոմէական ամենահնագոյն օրէնսդրական յիշատակարաններէն: Իրմէ առաջ շատ քիչ եղած են գիտնականներ, որոնք գրադած են հին գերմաններու օրէնսդրական առաջին փորձերն հետազօտելու. այդքան քիչ զնահատած են, կ'ըսէ, ցարդ այդ յիշատակարաններու կարեւորութիւնը, որոնք իրենց մէջ կը պահեն այս ժողովուրդներու բարոյքին ու սովորոյթներու մասին իրական ճշտաբերական տեղեկութիւններ:

Հետեւարար տեսակ մը անմշակ դաշտ եղած է Տաւուտեանի ուսումնասիրութեան նիւթը եւ կապուած անասելի դժուարութիւններու, որոնց յաղթած է սակայն օրինակելի ջանասիրութեամբ եւ արդիւնաբերած գրական գործ մը, որ վեր է ամէն զնահատանքէ:

Ուսումնասիրութեանս ծրագիրը Կ. Պ. մէջ սկիզբ առած արդէն 1840է առաջ՝ երկար տարիներու յամառ աշխատանքով Բերլինի մէջ կ'աւարտի եւ Jacob Grimmի թելադրանքով տպագրութեան կը յանձնուի 1845ին:

Կ'արժէ տալ հոս այս մասին Վսեմապատիւ Հեղինակին խօսքերը իրենց բնագրով: Նա կը գրէ իր յառաջարանին վերջը (էջ XIII). Né à Constantinople de parents Arméniens, je me livrai de bonne heure à l'étude de l'histoire universelle, et m'aperçus bientôt combien il m'était indispensable de connaître les institutions anciennes de peuples de l'Europe pour bien saisir et suivre les causes des événements de leur histoire et pouvoir porter un jugement sain sur leurs institutions actuelles. J'ai voulu jeter un coup d'oeil sur la vie sociale et politique de ses nations dont les descendants devaient plus tard si énergiquement dompter et gouverner une grande surface de la terre. Dans ce but je m'adonnai pendant quelque temps à l'étude des anciennes lois germaniques... déjà je commençais à faire quelques pas dans cette voie si difficile, lorsque mon gouvernement, jaloux d'encourager et de protéger mon instruction, daigna m'attacher à sa légation à Berlin où pendant plusieurs années j'ai occupé mes loisirs à m'entourer de nouvelles lumières et où j'obtins, je le publie avec reconnaissance, tant de la part de MM. les employés de la bibliothèque royale de cette ville que de celle de plusieurs savants, toutes les facilités désirables pour poursuivre mes recherches et compléter mon travail...:

Գիրքս ունի ընդարձակ ներածական մը (94 էջով), որուն մէջ գիտնական հեղինակը, իրեն յատուկ յստակ ծրագրով մը, կ'ուսումնասիրէ նախ ընդհանուր գիտելիքներ հին գերմանացիներու պատմութեան եւ օրէնսդրութեան մասին: Այսպէս, օրինակ, թէ հին Գերմանացիները գրաւոր օրէնքներ ունէին՝ յոյն կամ լատին գրերու ծանօթանալէ առաջ. ի՞նչ դրամ կը գործածէին. անոնց faida (վրէժխնդրական պատերազմ). անոնց զանազան դասակարգները եւն եւն:

էջ 1—639 (Ա. Հտր.) կ'ուսումնասիրէ օրէնսդրութիւնը Վիսիգոթներու, Բայուվարներու, Ալամաններու, Բուրգունդիոններու, Ֆրանկ-Սալիքներու եւ Ֆրանկ-Ռիպուէրներու: Իսկ էջ 1—741 (Բ. Հտր.) կը գրադի

լանդորարդներու, Թիւրինգիացիներու, Ֆրիսիոններու, Սաքսոններու եւ Անգլո-Սաքսոններու օրէնսդրութեամբ:

Բայ ի գործածած աղբիւրներու մանրամասն ցանկէ մը՝ ունի նաեւ այբուբենական շատ արժէքաւոր ցանկ մը ուսումնասիրութեանս մէջ կիրարկուած հին գերմանական կամ լատինական բառերու՝ իրենց մեկնութեամբ (Բ. Հտր., էջ 766—799):

Կարապետ Տաւուտեանի այս մեծարժէք աշխատանքը, իր ժամանակին, ուշադրութիւնը գրուած է գիտական աշխարհի: Գովեստով արձագանգած են գերմանական, աւստրիական, անգլիական եւ հայկական թերթերը: Կ. Պոլսոյ Հայաստանը ազգային հպարտութեամբ կը պարծենար. «Օսմանեան մեծագոր Տէրութեան կողմէն Բրուսիա խըրկուած ղեսպանին թարգման եւ քարտուղար աղնուական աղա Կարապետ Յարութիւն Տավուտեանը՝ իրեն մէկ ընտիր աշխատութեամբը թոյր եւրոպացոց մէջ յայտնի ըրաւ մօտերս՝ որ Հայոց իմաստուն մարդիկը իրենց ջանասիրութեամբը Եւրոպացի իմաստուններէն շատ վար չեն մնար: Ասանկ աղնուական մարդոց աշխատութենէն չնորհակալ ըլլալու եմք, որովհետեւ ասանկներուն աշխատասիրութեամբն է որ մեր ազգը յոյս կրնայ առնել Եւրոպայի կրթեալ եւ ուսումնական ազգաց կարգը անցնելու: Ճշմարիտ ազգասէրի մը շատ մեծ ուրախութիւն կ'ըլլայ, երբ որ մէկ կողմէն ազգին կրթութեանը աշխատողներ տեսնէ, եւ մէկալ կողմէն իր ազգակից ուսումնականի մը անունը գովութեամբ յիշուած տեսնէ օտար ազգաց մէջ<sup>157</sup>»:

Augsburgի Allgemeine Zeitungէն քաղելով՝ կ'արձագանգէր Իգմիրի Արշալոյսը<sup>158</sup> հետեւեալ վերնագրի տակ. «Տավութ օղլուին գերմանացոց օրէնսդրութեան պատմութիւնը»:

«Ան մարդիկներուն կարգը, որոնք ինքզինքնին գերմանացոց հին օրէնքները քննելու տուած են՝ դասելու է սա արեւելեանը. Կարապետ Արթին Տավուտ օղլու Կոստանդնուպոլսեցի հայ մը, որ Բրուսայի արքունեաց խրկուած Տաճկի ղեսպանին քարտուղար թարգմանն է, սա աշխատութիւնը յանձն առեր է, որ մինչուկ հիմա կը պակսէր. այս»

<sup>157</sup> Հայաստան, Կ. Պ. 1846, թ. 6:  
<sup>158</sup> Արշալոյս Արար., Չմիւսնիա 1846, թ. 264:

ինքն գերմանացուց հին օրինադրութեանց պատմութիւնը շինելու է գիտնական կերպով մը... Հեղինակին ջանքը, զգուշաւոր գրութեանը, ու յաջողակութիւնը ամէն կերպ յայտնի կը տեսնուի... Հոս մեր վախճանը ան էր որ օտարականի մը, որնոր ազգայինէ մը աւելի շատ մեծ դժուարութիւններու յաղթած է աս գործընթաց մէջ՝ գժուարին ջանքին արժանի եղած երախտագիտութիւննիս ցուցնենք: Աս երախտագիտութիւնը արդէն Բրուսիայի թագաւորին ու Պեռլինի գիտութեանց ճեմարանին կողմէ ըստ բաւականին հատուցուած է<sup>159</sup>»:

Պոլսոյ Հայաստան յաջորդ տարին<sup>160</sup> կը տեղեկագրէր. «Տաւութեան արգոյ գիտնական Պ. Կարապետ, որն որ երկայն ժամանակ Օսմանեան տէրութեան կողմանէ Պերլինի մէջ թարգմանի կամ գործակալի պաշտօն կատարելով՝ իրրեւ քաղաքագէտ անձ՝ մեծ անուն ստացած էր, մէկ երկու տարի յառաջ գերմանացուց հին օրինաց վրայ գրած գրքովը գիտնոց առջեւն ալ իրրեւ գրագէտ մեծ պատիւ ստացաւ: Պերլինի համալսարանը իր արդիւնքը վարձատրելու ու իր գրքովը Գերմանիայի ըրած ծառայութեանը փոխարէն մը ընելու համար, աս օրերս զինքը համալսարանին պատուոյ անդամ ընտրեց, թագաւորն ալ աս ընտրութիւնը հաստատեց»:

1848ին Վիեննայի Donau Zeitung Կարապետ Տաւութեանի Բերլինի թրքական ղեկավարնաւոր մէջ լիակատար իշխանութեամբ գործակալ անուանուելու առթիւ հետեւեալը կը գրէր. «Հաննաբեղ ու բազմաիմուտ Հայագրի Պ. Տաւութեանը, որ գերմաներէն լեզուաւ<sup>161</sup> պատմական եւ իրաւագիտական երեւելի գործք մը շարադրած է, եւ շատ տարի Պերլինի Օսմանեան ղեկավարնաւոր մէջ քարտուղարութեան պաշտօնը կատարած է, հիմա Դրան կողմանէ լիակատար իշխանու-

թեամբ գործակալ անուանուելու է ու Պերլին կու գայ<sup>162</sup>»:

Վերջապէս Atheneum անդրիերէն թերթը Վսեմ. Կարապետ Արթին Տաւութեան Փաշայի թուրք Պետութեան Խորհրդարանին անդամ, Հանրօգուտ շինութեանց նախարար եւ հեռագրատանց ու նամակատանց վերատեսուչ ընտրուելը առիթ առնելով՝ ըսելէ յետոյ թէ ան արդէն աշխարհահռչակ անուն մ'ունէր՝ անոր գրքին վրայ իր հիացումը կը յայտնէ. «Օսմանեան գրագէտի մը ձեռքէն ելլելուն պատճառաւ, կ'ըսէ, ա'լ աւելի մեծ անուն հանած է»: Ու կ'աւելցնէ. «Արեւելքի գրագէտի մը Անդլո-Սաքսոն կամ բնիկ Գերման գրոյցներուն ու կարծիքներուն մեկնութիւն տալը իսկապէս զարմանալու արժանի բան մը կ'երեւայ<sup>163</sup>»:

(Շարունակելի:) Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

**ՊԵՏՄԱՌԹԻՆ ԼԵՋԱՐԵԱՆ ՏՈՒՄ ԵՒ ՄՈՍԿՈՒՅՑԻ ԵՐԵՒԵԼԵԱՆ ԼԵՋԱՌԵՑ ԼԵՋԱՐԵԱՆ ԺԵՄԵՐԱՆԻ**

(Շարունակութիւն):

Ալէքսանդր Ա. կայսեր օրով (1801—1825) նոյնպէս նուաճողական քաղաքականութիւնը դէպի Արեւելեան Հայաստան երկար ժամանակ կանգ առաւ: Յայտնի է, որ այս կայսեր ամբողջ ուշադրութիւնը ուղղուած էր դէպի Արեւմտեան Եւրոպա, դէպի Նապոլէոն Ա. կայսեր նուաճումները Միջին Եւրոպայում, որոնք ի վերջոյ հանգեցին 1812 թ. ուսաֆրանսական պատերազմին:

Այսու հանդերձ այս կայսրն էլ շարունակեց արդէն պատմական աւանդութիւն դարձած քաղաքականութիւնը՝ հովանաւորութիւն ու բարեհաճ վերաբերմունքը դէպի Հայերը: Այս տեսակէտից ուշադրաւ է այն

<sup>159</sup> Հմմտ. Արքախոյ Յ. Այվազեան, Շար հայ կենսագրութեանց, Կ. Պ. 1893, էջ 161: Արշալոյս Արաւստեանի խմբագրութիւնը նոյն տեղ իր կողմէ ալ կը գրէր. «Մեր ազգայնոց ամէն բանի ճարտար ըլլալուն ազգի օրինակ մը կրնայ ըլլալ աս գրքին հեղինակը, որ գաղղիերէն լեզուաւ ասանկ գժուարին նիւթի մը վրայ իր գիրքը գրեց է: Առիկայ մեր ազգին մեծ պարծանք կը սեպենք»:  
<sup>160</sup> Անդ. 1847, թ. 9—62:  
<sup>161</sup> Տաւութեան իր գիրքը Փրանսերէն գրած է: Եւրոպայի գրածին նայելով (1848, թ. 21 ծանօթ.) կրնայ ըլլալ որ գերմաներէն թարգմանութիւն մ'ալ եղած ըլլայ:

<sup>162</sup> Եւրոպա, Վիեննա 1848, թ. 21: Եւրոպա իր կողմէ կ'աւելցնէ. «Աս համառօտ հատուած՝ ինչպէս մեր, նոյնպէս ամէն հայրենասէր անձանց սրտին ալ պէտք է որ մեծ ուրախութիւն պատճառէ, որովհետեւ աս պատուական անձին ընդունած պաշտօնէն ու երեւելի լրագրի մը իր վրայ աս կերպով խօսելին յայտնի կը տեսնուի որ ինքն իր խօսքով իր օտարներէն վարձուելով, գիտնական եւ ուսումնասիրական փոյթովը եւ մեծ ու աշխատալի երկասիրութեամբ թէ՛ թողը եւ մեծ ու աշխատալի երկասիրութեամբ թէ՛ թողը արժանաւոր Դրան եւ թէ՛ Եւրոպայի գիտնոց առջեւ ինչ մեծ յարգ ու համարում ստացած է»:  
<sup>163</sup> Մէմուրայը Հավատիս, 1868, թ. 748:

հրովարտակը, որը նա ուղղել էր Վրաստանի հայերին 1813 թ. սեպտեմբեր 16ին:

Այս հրովարտակը արդիւնք էր հետեւեալ դէպքերի.

1804 թ. իշխան Յիցեանովը ու զօրավար Գուրգոյիշը յարձակում գործեցին Գանձակի վրայ ու ջարդ տուին պարսիկներին: Այս յաղթանակով Գանձակի խառնութիւնը անցաւ ուսական իշխանութեան ներքոյ:

Այնուհետեւ 1804—1813 թ. մի շարք կռիւներ մղուեցին Երեւանի խանութեան դէմ, Երեւանը նուաճելու նպատակով. դժբախտաբար, ակնկալուած յաջողութիւնը չունեցան այդ կռիւները:

Այս բոլոր կռիւների ժամանակ Հայերը ոչ միայն մնացին հաւատարիմ Ռուսաստանին, այլ եւ գէնքով բերին իրենց թանկագին օժանդակութիւնը:

Թէ՛ Յիցեանովը, — վկայում է Պօտոն — որ «առանձին մեծ ատելութիւն էր գգում դէպի հայերը», եւ թէ՛ բոլոր Ռուս զօրավարներն ու հրամանատարները «միաձայն վկայեցին իրանց օրով Հայոց կատարած մեծամեծ յաղթութիւնների մասին»: Բտիչեւը գրում է, որ Կախէթի խռովարար ապստամբութիւնների ժամանակ, հայ Ազգը, որ Վրաստանի մարզարնակութեան նշանաւոր մասն է կազմում, անյողողղ մնաց հաւատարմութեան մէջ եւ զոհելով իր կարողութիւնը, մինչեւ կեանքն եւս, կուռեց ապստամբների դէմ եւ բազմիցս ապացուցեց իւր քաջութիւնն եւ անկեղծ անձնուիրութիւնը» (Պօտոն, էջ 12):

Այս զեկուցումների հիման վրայ էր, որ կայսրը յիշեալ հրովարտակը յայտարարեց եւ որի մէջ ասուած էր.

«Վրաստանում բնակուած իմ սիրելի եւ հաւատարիմ հպատակ Հայ Ազգին: Հայերը ցոյց են տուել իրենց մշտական խաղաղասիրութիւնն եւ հաւատարմութիւնը, երբ թեթեւամտութիւնն ու չարամտութիւնը ջանում էին ի զուր տեղ խախտել մեր կողմից Վրաստանում հաստատուած հանդիստն, ու խռովայոյց պայմաններում մնացին ամուր եւ անասան իրենց պարտաճանաչութեան մէջ դէպի մեզ եւ դէպի մեր գահը, զոհարելով իրենց ստացուածքը, իրենց կարողութիւններն եւ նոյն իսկ իրենց կեանքը յօգուտ մեր ծառայութեան եւ ընդհանուր բարիքի: Նման պարտաճանաչութիւն Վրաստանի Հայերի, նրա բոլոր գասակարգերի կողմից ցուցադրուած, նրանց ծառայութիւն-

ներն ու սխրագործութիւնները մեզ վրայ դնում են հաճելի պարտականութիւն վկայելու ամբողջ աշխարհի առաջ մեր արդարացի երախտագիտութիւնն ու բարեհաճութիւնը: Թո՛ղ այս վկայութիւնը պահպանուի ի փառս եւ ի պատիւ նրանց եւ ի յիշատակ գալոց սերունդների»:

Այնուհետեւ 1813 թ. հոկտեմբեր 12ի Գիւլիստանի դաշնագրով Պարսկաստանը զիջեց Ռուսաստանին՝ Նուխիս, Շամախի, Ղարաբաղի, Թալիշի, Բաքուի, Ղուբայի ու Գերբէնդի խառնութիւնները: Այս շրջաններում հայութիւնը կազմում էր տեղական ազգաբնակչութեան ստուար մասը:

Միաժամանակ նոյն այդ դաշնագրով հաստատուեց, որ Ռուսաստանի սեփականութիւնն են կազմում Գաղստանը, Վրաստանը, Իմերեթիան, Գուրիան, Աբխազիան եւ Շօրապետը, այսինքն՝ գրեթէ ամբողջ Անդրկովկասը, բացի Երեւանի ու Նախիջևանի խանութիւններից:

Նշանակալից է մասնաւորապէս հերոսական Ղարաբաղի ազատագրութիւնը, այն Ղարաբաղի, որ մի դարուց աւել կատաղի կռիւներ էր մղել Պարսկաստանի դէմ, անթիւ զոհեր տուել ու անկարագրելի տառապանքներ կրել...:

Պատմութիւնը ունի իր առեղծուածական երեւոյթները:

Անդրկովկասի ազատագրութիւնը վիճակուեց կատարելու Ռուսաստանի մի կայսեր՝ Նիկոլայ առաջինին (1825—1855), որ հոգով, սրտով ու մտքով հակառակ էր ամէն ազատութեան եւ որը իր երկրում եղաւ ամէն ազատութեան դահիճը...:

Հետեւաբար, բնական էր, որ նա եւ Անդրկովկասի ազատութիւնը շարդարացրեց Հայ ազատագրական շարժման ռահվիրաների՝ Իսրայէլ Օրբի, Յովսէփ Էմինի, Յովհաննէս Լազարեանի, Յովսէփ Արղութեանի փայտիսյաճ վառ երազները՝ ունենալ ազատ եւ անկախ Հայաստան Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ:

Ճիշտ է, որ Հայ ժողովրդի սիրտը շահու համար այդ նոյն կայսրը հրամայեց Երեւանի եւ Նախիջևանի խանութիւնները անուանել «Նախալգ Հայոց եւ մուծանել զայն ի մակամուսն մեր», բայց եւ այնպէս, նախ, դա չափազանց քիչ էր համեմատած ամբողջ մի դար Հայերի ակնկալած ազատութեան հետ, երկրորդ, այդ «Հայոց Նահանգը» իր վարչական կարգերով ոչնչով չէր տարբե-